

Եթե խաղաղությունը հանում ես, ստացվում է, որ իշխանությունները որեւէ այլ բան չունեն հանրությանը ներկայացնելու՝ առնվազն վերջին 5 տարվա գործունեության մասով: Փոխարենը՝ կան բազմաթիվ տարածքային, մարդկային կորուստներ, իսկ խաղաղության թեզն ասպարեզ են բերում՝ իրենց բոլոր ձախողումները ծածկելու նպատակով:

Կարդացեք՝ էջ 4



Ավելի լավ է՝ այսօրվանից Հայաստանի Հանրապետության համար նոր անուն որոշենք, մի այնպիսի անուն, որի մեջ «Հայաստան» բառը չլինի: Ալիեւն առաջարկում է «Արեւմտյան Ադրբեջան» տարբերակը, բայց Նիկոլը, կարծես, համաձայն չէ: Բա հետագա սերունդները չիմանա՞ն, թե ով է կործանել Հայաստանը: Ես կառաջարկեի «Նիկոլբայջան»:

Կարդացեք՝ էջ 5



Եթե նախկին ղեկավարներից մեկն ասեր՝ Արարատը հարեւան երկրինն է, ոչ թե կիսակաճառեին, այլ Հայաստանն ու սփյուռքը կփոթորկվեր: Կամ ասեին՝ Արցախը թող է, պետք է ազատվել, որ պետություն ունենանք, խելագար կամ թուրքի գործակալ կհամարեին: Իսկ այս 8 տարվա մեջ հազարավոր հակահայ ու ազգադավ խոսք ու գործ տեսանք:

Կարդացեք՝ էջ 7

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am
ISSN 1829-2372
ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ
N 73 (4208), 8 մայիս, ուրբաթ, 2026

# Հրապարակ

www.hraparak.am



Արցախցիների շրջանակից տեղեկացանք, որ Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանը խոր «դեպրեսիայի» մեջ է: Գաղտնիք չէ, որ Հայաստան տեղափոխվելուց հետո նա փորձում էր համագործակցել իշխանությունների հետ եւ ակնկալում էր, որ իրեն ինչ-որ կարգավիճակ կտան, կամ գոնե հունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ Փաշինյանն իրեն կմտցնի խաղի մեջ, քանի որ խոստանում էր արցախյան որոշ շրջանակների քվեն ընդդիմադիր ուժերից դեպի ՔՊ բերել: Սակայն Վաղարշապատի ընտրությունների արդյունքներից հետո եւ ընդդիմությունը, եւ Փաշինյանը հասկացել են, որ Բաբայանի շանսերը մեծ չեն, նրան ենթարկվող արցախցիների բանակն էլ բազմամարդ չէ, ուստի խաղադրույք չեն արել նրա վրա: Սամվել Բաբայանը, ասում են, փորձել է որոշ ընդդիմադիրների հետ հարաբերություններ կառուցել, բայց նրանք էլ կասկածներ են ունեցել, որ Բաբայանի թիկունքում Նիկոլ Փաշինյանն է կանգնած, ուստի նրանք էլ են հրաժարվել: Արդյունքում՝ ո՛չ սեփական կուսակցությամբ առաջադրվեց ընտրություններին, ո՛չ էլ որեւէ այլ ուժի հետ համագործակցություն ստացվեց: Հիշենք, որ նրա առաջնորդած Ազատական կուսակցությունը մասնակցել էր 2021-ի խորհրդարանական ընտրություններին: Ստացել էր ընտրողների 1,17 տոկոսի ձայները եւ փոշիացրել մոտ 15 հազար ձայն:

Մեր տեղեկություններով, իշխանությունները ուժային կառույցների միջոցով գտնում են մարզային եւ համայնքային հիմնարկների ոչ իշխանական աշխատակիցներին՝ պոլիկլինիկաներ, մանկապարտեզներ եւ այլն: Հիմնարկների ղեկավարների միջոցով, այսպես կոչված, նախընտրական ստուգարք են իրականացնում՝ պարզելու, թե իրենց աշխատակիցներից ով ինչ հայացքներ ունի եւ հունիսի 7-ի ընտրություններում մոտավորապես ում է ձայն տալու: Իսկ երբ անգամ մոտավոր կասկածներ են ունենում, որ այս կամ այն աշխատակիցն ընդդիմադիր ուժերի ընտրողն է, ՔՊ-ին ձայն չի տալու, սկսում են տարբեր մեթոդներով բացատրական զրույցներ վարել, համոզել, հորդորել, որ ընտրություններին չմասնակցեն: Փորձում են հոգեբանական ներգործություն ունենալ՝ ասելով, որ ընտրություններից հետո, անկախ ամեն ինչից, ՔՊ-ն է լինելու իշխանության, եւ ընդդիմադիրները խնդիրներ կունենան: Ցուցադրաբար ՔՊ ընտրողների ցուցակներ են կազմում, ներշնչում, որ կարողանալու են պարզել, թե ով ինչպես է քվեարկելու, բայց ամբողջ հույսերը վախի գործոնի եւ մարդկանց անգրագիտության վրա է, որ հավատան իրենց գերմարդկային ունակություններին եւ ձախողված ՔՊ-ի անվերապահ հաղթանակին:

## Լավ բան անել չի ստացվում

Ասում են՝ ուզում էինք լավ բան անել, ստացվեց՝ ինչպես միշտ: Թվում է, լավ բան էլ են ուզում անել ՔՊ-ական իշխանությունները: Դե, հիմա «լավ բաներ» անելու ժամանակն է՝ այս մեկ ամսվա ընթացքում ինչքան հասցնեն, ինչքան ուժերը պատի, լավ բաներ են անելու, որ ընտրողի «աչքը մտնեն», եւ նա իր քվեն չտա ընդդիմությանը, այլ իրենց ընտրի: Ամեն օր մարզ են գնում, դրսից հյուրեր են ընդունում, համերգներ ու փառատոներ, համաժողովներ ու գագաթնաժողովներ, ասֆալտ ու նորոգում: 5 տարվա չարածն ուզում են մի քանի ամսում անել, որ մարդկանց հին-վատ հիշողությունները ջնջվեն, քվեարկության գնալիս միայն վերջին օրերի աշխատանքը հիշեն: Ահա՝ անցած օրը Նիկոլ Փաշինյանն իր շքախմբով այցելել է Մաշտոցի կամ Միսակ Մանուշյան պուրակ, որտեղ խաղահրապարակ են կառուցել: Թվում է՝ լավ բան են արել, երեխաների համար սահելու, խաղալու ատրակցիոններ են սարքել, բայց պուրակն են փչացրել՝ կանաչ գազոնը ոչնչացրել, մի հսկա հատվածում բերել՝ մետաղից, փայտից ու արհեստական նյութերից խաղահրապարակ են սարքել: Կանաչի, ծառի, խոտի հանդեպ մի անբացատրելի ատելություն ունի այս իշխանությունը, բետոն, ասֆալտ անելու հանդեպ՝ մեծ սեր: Իսկ Երեւանում հիմա ամեն մի տերեւն ու խոտի սանտիմետրն է կարեւոր, եւ ոչ մի խաղահրապարակ պետք չէ այգիներում կառուցել: Կառուցեք ամայի տարածքներում, քանդեք ասֆալտը, ավելորդ գարաժներն ու շենքերը՝ դրանց տեղը խաղահրապարակներ սարքեք, ոչ թե այդ մի ափաչափ այգին փչացրեք: Խաղահրապարակում շրջելուց հետո էլ Նիկոլ Փաշինյանն այցելել է մոտակա շենքի տակ գտնվող Վալմարի արվեստանոցը: Թվում է՝ էլի վատ չէ, արվեստի, գեղանկարի հետ կառնչվի: Բայց սա էլ հայտնի պալատական նկարիչն է, որի անունը հնարավոր չէ հայ տաղանդավոր նկարիչների առաջին հարյուրյակի մեջ ներառել:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Մեր տեղեկություններով, տարբեր պետական կառույցներին հրահանգ է իջեցվել՝ Արարատ սարի պատկերն ամեն տեղից հանել: Շաբաթներ առաջ գրել էինք, որ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի պաշտոնական լոգոտիպից է հանվում Մասիս սարի պատկերը: Հիմա էլ մայր բուհի պաշտոնական կայքից տեղեկացանք, որ Երեւանի պետական համալսարանը բուհի նոր լոգոտիպի մրցույթ է հայտարարել՝ էսքիզներն ընդունվում են ս.թ. մայիսի 5-ից մինչեւ հունիսի 5-ը: Բանն այն է, որ ԵՊՀ լոգոյում եւս առկա է Մասիս սարի սիլուետը: Մայր բուհի կենտրոնական մասնաշենքն է, իսկ մասնաշենքի ետեւում՝ Արարատ լեռը: Նիկոլ Փաշինյանը տեւական ժամանակ է՝ պայքարում է Արարատ սարի դեմ. այն հանվեց Հայաստան ելքի եւ մուտքի կնիքների վրայից: Բանը հասել է նրան, որ նոր անձնագրերում պատկերված Խոր Վիրապը լուսանկարել են հակառակ՝ Թուրքիայի կողմից, որպեսզի Արարատ սարը Խոր Վիրապի հետնանկարում չերեւա:*

## ԱՍՈՒԼԻՍԸ ՉԱՎԱՐՏՎԱԾ՝ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԱՆՑԱՆ

Իրավապահ մարմինների մեր աղբյուրներից տեղեկացանք, որ երեկ «Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ Սամվել Կարապետյանի՝ ուղիղ եթերով հեռարձակվող ասուլիսը դեռ չավարտված՝ Նիկոլ Փաշինյանից նոր հրահանգ է իջեցվել իրավապահներին՝ մասսայական գաղտնալսումներ իրականացնել Կարապետյանի թիմակիցների շրջանում եւ ոչ միայն, ու հնարավոր եւ անհնար բոլոր միջոցներով նրա աջակիցների «վրա կեղտ գտնել» ու քրեական հետապնդումների նոր ալիք սկսել այդ ուժի դեմ: Երեկ արդեն Սյունիքում «Ուժեղ Հայաստանի» գրասենյակի դեմ նոր հարձակում իրականացվեց, եւ նորից մարդիկ ձերբակալվեցին: Ըստ ամենայնի, Նիկոլ Փաշինյանը ծանր է տարել Սամվել Կարապետյանի ինքնավստահ հայտարարությունները եւ իրեն ուղղված կոշտ գնահատականները, որոնք հատկապես հերքում էին այն մեղադրանքները, թե Կարապետյանը բանավոր խոսելու հետ կապված խնդիրներ ունի: Թերեւս սրանով էր պայմանավորված նաեւ այն, որ անմիջապես գործի դրվեց իշխանական քարոզչամեքենան՝ սկսեցին կեղծ վերնագրերով, ասածները հիմնովին աղավաղած լուրեր տարածել: Օրինակ, իշխանական կայքերից մեկը նյութ էր հրապարակել, թե իբր Սամվել Կարապետյանն ասել է. «Ռոբերտ Քոչարյանը հաղթանակ կերտած նախագահ է, եւ մենք միանալու ենք նրան»: Մինչդեռ Կարապետյանը Քոչարյանին բնորոշել էր որպես հաղթած նախագահ եւ ողջունել էր նրա այն հայտարարությունը, թե պատրաստ է ամենաշատ ձայն ստացած ուժին, այսինքն՝ «Ուժեղ Հայաստանին» միանալ:

ԵՄ

# ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ, ՓԱՇԻՆՅԱՆԻՆ ԱՋԱԿՑԵՑԻՆ ՄԱԿՐՈՆԸ, ՄԻ ՔԻՉ՝ ՔԱՐՆԻՆ, ՈՒՐԻՇ ՈՉ ՈՔ



Մայիսի 3-5-ը Երեւանում գումարված 4 արտաքին քաղաքական մասշտաբային միջոցառումներից ամենաէականը Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովն էր, որի առիթով ԵՄ անդամ 27 երկրից 17-ի պետության կամ կառավարության ղեկավարները ժամանել էին Հայաստան. Բելգիայի, Բուլղարիայի, Էստոնիայի, Իտալիայի, Իսպանիայի, Իռլանդիայի, Լեհաստանի, Լիտվայի, Լյուքսեմբուրգի, Խորվաթիայի, Կիպրոսի, Հունաստանի, Չեխիայի, Ռումինիայի, Սլովակիայի, Ֆրանսիայի, Ֆինլանդիայի առաջնորդները: Բուլղարիայից, Կիպրոսից, Հունաստանից, Ռումինիայից, Ֆրանսիայից եկել էին նախագահները, մնացյալներից՝ վարչապետները: Երեւան չէին ժամանել ԵՄ անդամ 10 երկրի՝ Ավստրիայի, Գերմանիայի, Դանիայի, Լատվիայի, Հունգարիայի, Մալթայի, Նիդերլանդների, Շվեդիայի, Պորտուգալիայի, Սլովենիայի ղեկավարները, եւ, առհասարակ, ներկայացուցիչներ չէին ուղարկել:

ԵՄ երկրների ղեկավարները տարբեր ձեւաչափերում գրեթե ամենամսյա հաճախականությամբ հանդիպում են, ընդամենը 1-2 շաբաթ առաջ Կիպրոսում էին, այնպես որ՝ ոմանց բացակայությունը մի կամ մյուս հավաքից բնական է, մանավանդ՝ երբ խոսքը ԵՄ-ից դուրս ձեւաչափերի մասին է: 27-ից 17-ի ներկայությունը գոհացնող ցուցանիշ է:

ԵՄ անդամ չհանդիսացող երկրներից համարյա բոլոր հրավիրյալներն էին եկել, քանի որ ԵՄ առաջնորդների գագաթնաժողովներին նրանք ի պաշտոնե չեն մասնակցում, եւ ԵՄ-ոչ ԵՄ երկրներին միավորող հավաքները նրանցից շատերի համար մայրցամաքի առաջնորդների հետ շփվելու կենտրոնական հարթակն է: Երեւանյան գագաթնաժողովին էլ համարյա բոլոր հրավիրյալները ոչ ԵՄ երկրներից ներկա էին՝ Բալկանյան Ալբանիայից, Բոսնիա-Հերցեգովինայից, Հյուսիսային Մակեդոնիայից, Կոսովոյից, Մոնտենեգրոյից մինչեւ Ուկրաինա եւ Վրաստան: Ժամանել էին նաեւ փոքրիկ Մոնակոյի, Լիխտենշտեյնի, Անդորրայի իշխանապետությունների, Սան Մարինոյի Հանրապետության առաջնորդները, Շվեյցարիայի նախագահը, առաջին անգամ գագաթնաժողովին մասնակցեց Կանադայի վարչապետը, եւ հատկապես նշանակալից էր Միացյալ Թագավորության վարչապետի ներկայությունը:

Սակայն քանի որ Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովներ արդեն մի քանի տարի է՝ կազմակերպվում են, կա սահմանված աշխատակարգ, ամփոփիչ հռչակագիրն էլ բազմաթիվ եվրոպական եւ միջազգային խնդիրների է անդրադառնում, հնարավոր չէ գագաթնաժողովի հռչակագիրը նվիրել մի երկրի հետ հարաբերություններին, Նիկոլ Փաշինյանը մտահղացել էր համարյա միաժամանակ երկրորդ միջոցառում կազմակերպել՝ ԵՄ-Հայաստան գագաթնաժողով, որի հռչակագիրն արդեն Հայաստանի մասին էր՝ համարյա 7-8 էջ: Հաշվարկն այն էր, որ հասարակության մոտ տպավորություն կստեղծվի, թե գրեթե ողջ Եվրոպան Հայաստանում էր եւ Հայաստանի հետ հարաբերությունների վերաբերյալ հռչակագիր ընդունեց, որը, հավանաբար, աջակցություն է Փաշինյանի կառավարությանը:

Ընդսմին, աշխարհում քիչ թե շատ նշանակալից որեւէ երկիր երեւի չի գտնվի, որի հետ ԵՄ-ն երկկողմ գագաթնաժողովի ձեւաչափ չունենա: Հետեւաբար Փաշինյանը, փոխարեն լռելու, որ նոր է միայն կարողանում ԵՄ-Հայաստան գագաթնաժողով կազմակերպվել, դա փորձում է որպես ձեռքբերում մատուցել: Ինչն ավելի վատ էր՝ ԵՄ-Հայաստան գագաթնաժողովից ու դրա փաստաթղթերից այդպես էլ չհասկացվեց՝ Փաշինյանն ու իր կառավարությունը դիմելո՞ւ են ԵՄ անդամակցության համար, թե՞ ԵՄ անդամակցության հայտ ներկայացնելն արդեն հաջորդ կառավարության գործն է, Փաշինյանի գործը միայն մեջտեղում դատարկ երեւալն է, ինչպես բոլոր մյուս հարցերում:

Այս երկու միաժամանակյա միջոցառումները քիչ էին, Փաշինյանն անձնապես իր համար կարեւոր երրորդ մի միջոցառում էլ էր կազմակերպել՝ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի պետական այցը Հայաստան, քանի որ նա երեւի միակ առաջնորդն էր Եվրոպայում, որն անձնապես Փաշինյանին աջակցություն կհայտներ առաջիկա ընտրություններում: Այդպես էլ եղավ: Եվ դա ամենահետաքրքիրն է: Գագաթնաժողովների առիթով Երեւան ժամանած առաջնորդներից Փաշինյանը հանդիպում-առանձնազրույցներ է ունեցել Բուլղարիայի նախագահի, Լիտվայի, Կանադայի, Կոսովոյի, Խորվաթիայի, Մեծ Բրիտանիայի, Իսպանիայի վարչապետների, Թուրքիայի փոխնախագահի, Կիպրոսի նախագահի հետ: Ոչ մի առանձնազրույցի մասին հաղորդագրությունում, բացառությամբ Կանադայի վարչապետի, «ընտրություններ» բառը չկար:

**ԿԱ՛Մ ՉԵՆ ԺԱՄԱՆԵԼ,**
**ԿԱ՛Մ ՉԵՆ ՀԱՆԴԻՊԵԼ,**
**ԿԱ՛Մ ՉԵՆ ԱՋԱԿՑԵԼ**

Այն արկածախնդրությունից հետո, երբ ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի երեւանյան այցի ընթացքում արտասանած մի ֆրազը՝ Հայաստանի պրոարեւմտյան քաղաքականությանն աջակցելու եւ դրա շարունակումը տեսնելու ցանկության մասին, Փաշինյանի խեղկատակ թիմը մանիպուլացրեց եւ հասարակությանը մատուցեց որպես անձամբ Փաշինյանին ու ՔՊ-ին հայտնված աջակցություն (ԱՄՆ նախագահն էլ, ի պատասխան, իր ապրիլքսանչորսյան ուղերձում հրապարակային ապտակեց Փաշինյանին եւ ՔՊ-ին՝ ուղերձը հասցեագրելով ամերիկահայերին եւ աշխարհասփյուռ հայությանը, որեւէ կերպ չհիշատակելով 2025-ի օգոստոսի 8-ը, Վաշինգտոնում ստորագրված փաստաթղթերը կամ Փաշինյանին), միանգամայն սպասելի էր, որ Եվրոպայում դրանից հետեւություններ կարվեն:

Եվ արվել էին. ԵՄ անդամ 27 երկրից 10-ի ղեկավարները չժամանեցին Հայաստան, ժամանած ղեկավարներից 10-ը հանդիպում կամ առանձնազրույց չունեցավ Փաշինյանի հետ, մնացյալ 7 ղեկավարների հանդիպումներում էլ՝ բացառությամբ Ֆրանսիայի նախագահի, ենթադրելի է, առհասարակ, «ընտրություն» բառ չեն արտասանել: Կանադայի վարչապետ Մարկ Քարնին, օրինակ, «ընտրություն» բառն արտասանել էր, եւ դա իսկույն հայտնվել էր ՀՀ կառավարությունից տարածված հաղորդագրությունում. «Մարկ Քարնին... հայտնել է ընտրությունների անցկացման հարցում աջակցություն ցուցաբերելու իրենց պատրաստակամությունը»: Թե Կանադան ինչպես պետք է աջակցի Հայաստանի ընտրություններին, անհասկանալի է, բայց դա Փաշինյանի կանտորային քիչ է հուզում, էականը՝ «ընտրություն» եւ «աջակցել» բառերը երեւան հաղորդագրությունում: Հետեւաբար, կասկած լինել չի կարող՝ եթե ուրիշ մի ղեկավար էլ այդ բառերն արտասանած լիներ, դա դուրս չէր մնա հանդիպման մասին մամլո հաղորդագրությունից:

Այո, Եվրոպան հրաշալի եւ մեծապես գնահատելի ժեստ արեց Երեւանում գագաթնաժողով գումարելով եւ շրջակա երկրներին ի ցույց դնելով իր ներկայությունը Հայաստանում եւ սատարումը Հայաստանի եվրոպական ապագային: Միաժամանակ, եվրոպական ղեկավարները դիվանագիտորեն ձեռնպահ մնացին առաջիկա ընտրություններում Փաշինյանին սատարելուց: Դա Հայաստանի հանդեպ այն դիրքորոշման մանիֆեստացիան էր, որը գագաթնաժողովների նախօրեին հրաշալի ձեւակերպել էր Հայաստանում ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը: Նա «Արմենպրեսին» ասել էր. «Մեր աջակցության նպատակը Հայաստանի ինքնիշխանության պաշտպանությունն է՝ ապահովելու, որ հունիսի 7-ին Հայաստանի ապագան որոշեն բացառապես Հայաստանի քաղաքացիները եւ ոչ այլ ոք: Միաժամանակ ցանկանում ենք հստակ ընդգծել, որ այս աջակցությունը որեւէ կերպ կապված չէ որեւէ քաղաքական ուժի կամ թեկնածուի հետ: Եվրոպական Միությունը չի ընտրում հաղթողներին: Մենք համագործակցելու ենք այն կառավարության հետ, որը կձեւավորվի Հայաստանի քաղաքացիների ընտրության արդյունքում՝ առաջնորդվելով նույն սկզբունքներով եւ նույն օրակարգով: Թե ով կհաղթի, բացառապես Հայաստանի ընտրողների որոշելիքն է, եւ ես խրախուսում եմ բոլորին՝ օգտվել իրենց այդ իրավունքից՝ չտրվելով ապատեղեկատվական այն նարատիվներին, թե Հայաստանի քաղաքացիները որոշման մեջ դեր չունեն: Իրականում որոշումը պատկանում է միայն եւ միայն նրանց: Մեզ համար կարեւոր է, որ գործընթացը լինի արժանահավատ, որ քաղաքացիները կարողանան ազատորեն կատարել իրենց ընտրությունը, եւ որ արդյունքներն արտացոլեն հայ ժողովրդի իրական կամքը: Ահա թե ինչ են նշանակում ժողովրդավարական ընտրությունները, եւ դա է, ինչին Հայաստանն արժանի է»:

ԵՄ դեսպանի հետ անհնար է չհամաձայնելը: Չորրորդ միջոցառումն էլ, որ կազմակերպվել էր մեր մայրաքաղաքում՝ թվարկված երեքին զուգահեռ, ՀՀ ԱԳՆ-ի «Երեւանյան երկխոսություն» ֆորումն էր, որին, վախենամ, ոչ միայն ես, այլեւ հայաստանցիներից շատ-շատերը ժամանակ չեն ունեցել հետեւել: Միակ միջադեպը, որ կապ ունի այդ ֆորումի հետ եւ գրավեց ուշադրությունս, ֆորումին մասնակցող Թուրքիայի պատվիրակ Սերդար Քըլըչի հայտարարությունն էր, թե ինքն ու Ռուբեն Ռուբինյանը նույն մշակույթի կրող են: Հետաքրքիր տեղեկություն էր Ռուբինյանի մասին:



Լուսինե
ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

# ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՁԱՅՆԸ



Սյուզան
ՍԻՄՈՆՅԱՆ

Երեկվանից բուհերի եւ այլ կրթական հաստատությունների աշխատակիցները, քարոզարշավի մեկնարկին ընդառաջ, շրջաբերականներ են ստանում ԿԳՄՍՆ-ից, նախարարն է ելույթ ունենում՝ պարզաբանելով քաղաքական գործունեությամբ զբաղվելու նրանց իրավունքը եւ կոչ է անում պահպանել օրենքը: «ՀՀ քաղաքացիները, այդ թվում՝ նաեւ կրթական հաստատությունների աշխատակիցները, ունեն քաղաքական գործունեությամբ զբաղվելու իրավունք, որը կարող են իրացնել ոչ աշխատանքային ժամերին՝ աշխատանքային գործառույթներից/զբաղվածությունից դուրս: Ուստի կոչ ենք անում՝ հետեւողականորեն պահպանել ՀՀ օրենսդրության պահանջները եւ զերծ մնալ կրթական հաստատություններում քաղաքական գործունեություն ծավալելուց», - ասված է շրջաբերականում: Երեկ էլ Ժաննա Անդրեասյանն ԱԺ ամբիոնից սպառնում էր մարդկանց ազատել աշխատանքից եւ զրկել մանկավարժական գործունեության իրավունքից, եթե կրթական հաստատությունները վերածեն «քաղաքական գործունեության բեմահարթակի» եւ կրթօջախներում գործունեություն ծավալեն: Երեւի, ներքին ձայնն է ասում՝ մի հատ էլ վախեցրեք, մի գրություն էլ ուղարկեք, մի հատ էլ ականջները լցրեք, որ հասկանան՝ բացի ՔՊ-ից ոչ մեկի օգտին չեն կարող աշխատել: Ի դեպ, այս հայտարարությունները նաեւ վկայում են այն մասին, որ պետական ծառայողների եւ ուսհաստատությունների աշխատակիցների մեջ ՔՊ ընտրողները մեծամասնություն չեն կազմում, եւ իշխանությունը դա լավ գիտի:

Անգամ այն պարագայում, երբ Փաշինյանը թիմով գրեթե ամենշաբաթյա ռեժիմով այցելում է դպրոցներ, մանկապարտեզներ ու սեփական քարոզն անում այնտեղ՝ հորդորելով ՔՊ-ին ընտրել, եւ այսպիսով իր ֆիզիկական ներկայությամբ հոգեբանական ճնշման է ենթարկում կրթական հաստատությունների աշխատակիցներին, իսկ բոլոր բուհերում էլ յուրային ռեկտորներ են նշանակվել, իշխանությունը, այնուամենայնիվ, սարսափած է ու նախազգում է, որ մարդիկ իրենց դեմ են աշխատելու:

# ԱՅԴ ՓՈՔՐԻԿ ՇԱՆՏԱԺԻՍՏԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՎՍՏԱՀԵԼ, ԻՆՁ ԻՆՉՈ՞Ւ ՉՊԵՏՔ Է ՎՍՏԱՀԵՆ

*«Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ Սամվել Կարապետյանը երեկ, կարելի է ասել, առաջին քաղաքական քննությունը հանձնեց՝ պատասխանելով երկու տասնյակից ավելի լրագրողների հարցերին:*



Լրագրողներին նա հյուրընկալել էր իր առանձնատանը, քանի որ տնային կալանքում գտնվելով՝ իրավունք չունի լքել այդ տարածքը: Մոտ 3 ժամ պատասխանելով իրեն ուղղված հարցերին՝ նա ցրեց մինչ օրս տարածված միֆը, թե բանավոր խոսքի հետ կապված խնդիրներ ունի: Ասուլիսն ուղիղ հեռարձակվում էր: Նա կատակում էր, անպատասխան չթողեց ամենասադրիչ հարցերն անգամ, մի շարք ուղերձներ հնչեցրեց:

Մենք հետաքրքրվեցինք հետընտրական զարգացումների մասին՝ ունե՞ն արդյոք պլան Բ, քանի որ Հայաստանում ընտրություններով երբեք իշխանություն չի փոխվել, ինչո՞ւ են վստահ, որ այս անգամ փոխվելու է, ու հիմիկվանից ապագա վարչապետ են իրեն ներկայացնում: Եթե իշխանություն չվերցնեն, վերցնելո՞ւ են պատգամավորական մանդատները, թե՞ համարելու են, որ ընտրությունները կեղծվել են, ու հետընտրական պայքար են սկսելու: Կարապետյանը հաղթական դիրքերից չցանկացավ իջնել. «Ընտրություններից հետո ես լինելու եմ վարչապետը... Այդ պլան Բ-ն ունի հայ ժողովուրդը, ես ի՞նչ պետք է անեմ մենակ: Հաստատ, ժողովուրդն ունի բոլոր պլանները, մենք գնում ենք բացարձակ հաղթանակի, ես վստահ եմ դրա մեջ: Ես միայն սոցհարցումների վրա չեմ հիմնվում, ես հիմնվում եմ նաեւ Փաշինյանի բացարձակ ցածր ռեյտինգի վրա: Դրա համար մենք հիմա անում ենք առաջին քայլը՝ գնում ենք ընտրությունների օրինական ճանապարհով՝ թույլ չտալով ոչ մի ապօրինություն մեր կողմից: Դուք տեսնում եք մեր նկատմամբ կիրառվող բոլոր քայլերը, բայց դուք մի անհանգստացեք. իրենք ուրիշ ձեւ չունեն՝ 25 տոկոս ռեյտինգ ունենալով՝ իրենք չեն կարող ոչ մի իշխանություն ունենալ Հայաստանում»:

Հիշեցրինք Նիկոլ Փաշինյանի հայտարարությունները, թե «Սամվել Կարապետյանի ամբողջ ունեցվածքն իր ձեռքից վերցվելու է»: Պատասխանեց. «Նիկոլ Փաշինյանը չի պատկերացնում այն ունեցվածքը, որի մասին խոսում է: Չկա այդպիսի մարդ, այդպիսի ուժ, որը կարող է ինձ ամբողջությամբ ունեզրկել»: Նա խուսափեց հստակ պատասխանել ընդդիմության միավորման եւ Փաշինյանի խայծն ուտելով՝ նախկիններկա տարանջատում անելու մասին մի շարք հարցադրումներին, բացատրեց, թե քննարկումներ շատ ուժերի հետ են ունեցել, բայց նկատել են օրակարգերի որոշակի տարբերություններ, եւ հենց դրա համար էլ չի ստացվել:

Առավել ուշագրավ էր Կարապետյանի արտաքին քաղաքականության տեսլականը՝ Ռուսաստանի եւ ԵՄ-ի վերաբերյալ ունեցած դիրքորոշումները: «Մեզ պետք են մեկից ավելի երաշխավորներ»: Խաղաղության պայմանագրի եւ TRIPP-ի մասին ասաց. «Մենք հասկանում ենք, որ այսպիսի խաղաղությունը հայ ազգին, հայ ժողովրդին չի բավարարելու, մենք փոքր պետություն ենք, թեկուզ՝ հպարտ, մեզ պետք են մեկից ավելի երաշխավորներ, աշխարհում շատ չեն այդ երաշխավորները, աշխարհում կա ռեալ 3 գերտերություն՝ ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան: Կան տարածաշրջանային շահեր ունեցող պետություններ, մենք ունենալու ենք երաշխավորություն այդ պետություններից միաժամանակ՝ ում հետ կարող ենք պայմանավորվել, վստահ եմ՝ մեկից ավելի»: Ինչ վերաբերում է TRIPP-ին, նշեց՝ չեն չեղարկելու պետական մակարդակով ստորագրված ոչ մի փաստաթուղթ. «Դա չի նշանակում՝ մենք անելու ենք ցանկացած բան, ինչ գրված է այնտեղ, մենք փորձելու ենք լավարկել այդ փաստաթուղթը, ավելի համապատասխանեցնել մեր երկրի շահերին, քանի որ ես մտավախություն ունեմ, որ դրանից օգտվում են բոլորը, բացի Հայաստանը»:

«Հայաստանի օկուպացված տարածքների համար պայքարելու ենք բանակցությունների միջոցով: Բայց Արցախ վերադարձնելու հնարավորություն, Փաշինյանն այնպես արեց, որ չունենք: Մենք պետք է անենք այնպես, որ արցախցիներն այստեղ արժանապատիվ ապրեն»,- ասաց Սամվել Կարապետյանը: ԵՄ-ի մասով հստակ դիրքորոշում հայտնեց. «Ոչ ոք Եվրոպայում մեզ չի սպասում, դուք չեք կարող ցույց տալ որեւէ երկիր, որը չունի սահման Եվրոպայի հետ եւ դարձել է ԵՄ անդամ: Այդպիսի երկիր գոյություն չունի: Այսինքն՝ մենք շարունակելու ենք երգել-պարել ԵՄ-ի հետ, բայց հենց դա խաթարեց բալանսը՝ տարածաշրջանային երկրի հետ, որովհետեւ մենք արդեն տեսել եւ տեսնում ենք այն երկրներին, որոնք «ֆանատորեն» այդ գաղափարը տարել են, ինչ է կատարվում, օրինակ՝ նույն Ուկրաինան, թե ինչ է կատարվում այնտեղ, Վրաստանը՝ կորցրին իրենց լավագույն տարածքները: Եթե դա բերելու է մեր երկրի գլխին փորձանք, ապա մենք դա չենք անելու»:

Իրեն ուղղված մեղադրանքներին էլ անդրադարձավ՝ ինչո՞ւ է պատերազմից հետո շնորհավորել Փաշինյանին, ինչո՞ւ էր պատերազմի օրերին հավասարության նշան դրել երկու կողմի միջեւ՝ իր այդքան քննարկված հայտարարությամբ, կամ՝ ինչու ՌԴ-ի դեմ հայտարարություն չի արել՝ Ադրբեջանին զենք վաճառելու, ՀԱՊԿ-ի գործառույթները չկատարելու մասով: Վստահեցրեց, որ չի շնորհավորել, պարզապես, քաղաքավարությունից ելնելով, ընդունել է Փաշինյանի հանդիպման հրավերը, չընդունելը, իր խոսքով, գռեհիկ կլիներ, իսկ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ էլ հավասարության նշան չի դրել: «Դա միակ տարբերակն էր, որ մենք հիմա ունենայինք հայկական Արցախ: Փաշինյանն իր մեծամտությամբ դա անտեսեց, եւ մենք ունեցանք այն, ինչը որ ունեցանք»,- ասաց՝ փակագծեր չբացելով:

Նրա խոսքով՝ չկա աշխարհում հայ, որն ավելի շատ բան է արել Հայաստանի բանակի համար կամ այն բանի համար, որ պատերազմը կանգնի, քան ինքը: «Դա ամենածանր հարցն է ինձ համար, քանի որ ես չեմ կարող փակագծեր բացել, ես չեմ կարող այդ հարցին պատասխանել, այդ հարցին թող պատասխանի Փաշինյանն ու 44-օրյա պատերազմի ժամանակ պաշտպանության նախարար եղած անձը: Այդ հարցի պատասխանը տվել է Փաշինյանի շեֆը, երբ ինձ հայտարարել է միջազգային հետախուզում: Միջազգային հետախուզում չեն հայտարարում մարդկանց, ովքեր ոչինչ չեն արել այդ օրերին: Միջազգային հետախուզում չհայտարարեց ո՛չ Փաշինյանի, ո՛չ իր խմբակի գոնե մեկ անդամի նկատմամբ»,- նկատի ունենալով Ալիեւին՝ ասաց նա:

Ինչ վերաբերում է զինվելուն, թեեւ վստահեցրեց, որ երբ զենք ես գնում՝ ստանում ես, բայց. «Իշխանության ծախողումներին գնահատական տալը կլինի ոչ կոռեկտ»: Հետո կես կատակ-կես լուրջ ասաց. «ՀԱՊԿ-ին քֆուր տա՞մ, որ հասկանաս՝ կաշկանդված չեմ: Միգուցե Փաշինյանը չի էլ դիմել ՀԱՊԿ-ին, ես նստեմ բացատրեմ, թե ՀԱՊԿ-ը ինչի գործունեություն չի ծավալե՞լ»: Ի դեպ, Կարապետյանը փորձում էր ամեն կերպ փարատել այն կասկածները, թե ինքը Պուտինի մարդն է, Պուտինն է իրեն գործուղել Հայաստան: «Պուտինն ինձ կանչեց, ասաց՝ գնա հորդ քառասունքի պատարագին, մեր գործակալ լրագրողը կգա, հարց կտա, հետո մեր գործակալ Նիկոլը գործ կհարուցի... դրանից հետո կմտնես քաղաքականություն. այսպե՞ս եք պատկերացնում»,- հեգնեց նա այդ հարցը: Ձերծ չմնաց նաեւ Փաշինյանի հասցեին կոշտ բնորոշումներից, թե պամպերսը հագած՝ Ռուսաստանին շանտաժ է անում, եթե դժգոհ է, թող դուրս գա ՀԱՊԿ-ից: Իր անփորձության մասին հարցին ի պատասխան էլ նշեց, որ Փաշինյանն ընդամենը փոքրիկ շանտաժիստ է եղել, որին պետություն վստահեցին, իրեն ինչո՞ւ չպետք է վստահեն: Իսկ ամենասուրը հալյուցինացիաներ առաջացնող սնկեր ուտելու մասին հայտարարությունն էր, որն ափերից այնքան էր հանել Փաշինյանին, որ ասուլիսը դեռ չվերջացած՝ լայվ մտավ, սպառնալով, որ Կարապետյանին դատի է տալու: Կարապետյանը հորդորել էր ուշադրություն չդարձնել Փաշինյանի զառանցանքներին. «Վարչապետն անցյալ տարի երբ գնացել էր Չինաստան, դուք գիտեք՝ այնտեղ կան հատուկ սնկերի ռեստորաններ, որոնք մարդկանց մոտ հալյուցինացիա են առաջացնում: Ինքն այնտեղ փորձել էր, դուրը եկել էր եւ, իմ ինֆորմացիայով՝ մոտավորապես մեկ տոննա հետը առել-բերել է Հայաստան: Երբ Կառավարությունում լրագրողների հետ է հանդիպում, Ազգային ժողովում բարձրանում է ամբիոն, անպայման օգտագործում է այդ սնկերից: Եվ ինչ երազ տեսնում է, կարող է ամբիոններից դուրս տալ: Դա ընդհանուր այդ սնկերի շնորհքն է»:



**Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**
**lusine.shahverdyan@hraparak.am**

# ՍԹՐԵՍԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԵՐԳ ԵՆ ԳՆՈՒՄ, ԱՍՈՒՄ ԵՆ՝ ՄԵՐ ԸՆՏՐԱԶԱՆԳՎԱԾՆ Է

«Հրապարակի» զրուցակիցն **Արտաշես սարկավագ Աջապահյանն** է:

**- Նիկոլ Փաշինյանը Մակրոնի եւ եվրոպացի հյուրերի հետ այցելեց Գյումրի, համերգ տեղի ունեցավ, ՔՊ-ն քանի օր է՝ գլուխ է գովում, թե համերգի բազմամարդ լինելն իրենց շնորհիվ էր, իրենցով էր պայմանավորված: Ի՞նչ կարծիք ունեք այդ համերգի մասին, հետաքրքիր է՝ Միքայել սրբազանն ի՞նչ կարծիքի է այս ամենի մասին:**

- Ես սրբազանի հետ չեմ զրուցել, քանի որ արգելված է նրան այցելելը: Տնային կալանքի շրջանակներում արգելքներն ավելի շատացան՝ առաջ գոնե կարողանում էինք տեսնել, հիմա դա էլ չի կարելի, այնպես որ, չգիտեմ նրա կարծիքը: Ինչ վերաբերում է համերգին եւ այդ այցին, ապա, ինչքանով ես գիտեմ, Ֆրանկոֆոնիայի հետ ծրագրեր վաղուց են եղել, նախքան Փաշինյանի գալն էլ: Նիկոլն այստեղ չունի ռեյտինգ, եւ ինքը դրա մասին շատ լավ գիտի, բայց ուզում է մարդկանց աչքը խաբի, մարդ է բերում-տանում այստեղ: Մարդիկ սթրեսից դուրս գալու համար համերգ են գնում, իսկ իրեն թվում է, թե դա իր ընտրազանգվածն է:

**- Բայց ասում են, որ եթե չհամակրեին իրենց, իրենց կազմակերպած համերգին չէին գնա:**

- Եթե համերգի գալը կապում են իրենց աջակցելու հետ, ի՞նչ ասեմ, դա էլ իրենց «հաղթանակը» թող լինի: Բայց իրականում մարդիկ ուղղակի չունեն այն գիտակցությունը, որ իրենց՝ համերգի գնալը կապվում է իշխանություններին աջակցելու հետ: Վստահ եմ, որ եթե լրագրողները մարդկանց հարցնեին՝ աջակցո՞ւմ եք Փաշինյանին, պատասխանը բացասական կլիներ: Մարդիկ համերգներ սիրում են, առիթ էր, գնացին, կտրվեցին իրականությունից, ուրախացան:

**- Ասում եք՝ գյումրեցիներն ընդդիմադիր են: Ինչո՞վ է դա պայմանավորված:**

- Գյումրիում ապրող մարդիկ պահպանողական են՝ կյանքի, ավանդույթների, ինչպես նաեւ՝ հոգեւոր կյանքի, եկեղեցու հետ կապված, իսկ օրվա իշխանությունները պահպանողական չեն, եւ պահպանողական հանրույթը դեմ է նրանց: Փաշինյանի իշխանությունը մեր ավանդույթներին, եկեղեցուն դեմ է, այդ պատճառով էլ մեր քաղաքն օտարություն է տեսնում Նիկոլի մեջ: Նրան համարում են դեմ մեր նիստուկացին եւ մեր ամեն ինչին:

**- Իսկ Մակրոնին սիրո՞ւմ են:**

- Մարդիկ կան՝ ուզում են նրա հետ պարզապես նկարվել, մարդիկ կան՝ գուցե սիրում են, բայց ցանկացած քաղաքական գործչի մասին կարծիք կազմելու համար գոնե մի փոքր պետք է պատմություն իմանալ: Մեր հասարակությունն այնքան էլ տեղեկացված չէ այդ իմաստով: Եթե Մակրոնին լավ են վերաբերվում, դա չի նշանակում, որ նա կարող է ինչ-որ հարց լուծել Հայաստանի համար: Արտաքին սիմպատիայով մարդիկ կարող են սիրել ինչ-որ մեկին, բայց նա իրականում տվյալ պետության համար կարող է շատ վտանգավոր լինել, անգամ՝ աղետաբեր:



**Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԹԵԶՆ ԱՍՊԱՐԵԶ ԵՆ ԲԵՐՈՒՄ՝ ԻՐԵՆՑ ԲՈԼՈՐ ՁԱԽՈՂՈՒՄՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ* ***Հակոբ Բադալյանն*** *է:*



**- Մայիսի 8-ից մեկնարկում է նախընտրական քարոզարշավը: Հիմնական խաղացողներն ակտիվացել են, արդեն ունեն իրենց կարգախոսները, սիմվոլները՝ լոգոյի տեսքով: ՔՊ-ն հանդես է գալիս սրտիկներով եւ ասում է՝ խաղաղություն: Ռ. Քոչարյանը՝ թիմի հետ, Զվարթնոցի տաճարի ֆոնին ասում է. «Միասին կարող ենք», Ծառուկյանի ուժը ներկայանում է «Առաջարկ Հայաստանին» խորագրով, Սամվել Կարապետյանը խոստանում է «Ուժեղ Հայաստան», Արման Թաթոյանը՝ «Արդարություն»: Ո՞ր ուժի կարգախոսն ու սիմվոլն են տպավորել Ձեզ:**

- Առանձնահատուկ կարգախոսներ եւ լոգոներ իրականում չենք տեսնում: Հայաստանի համար որոշակի ստանդարտի մեջ է այս ամենը: Փորձ է արվում կարգախոսների միջոցով ներկայանալ որպես առավել ապահով, բարեկեցիկ ու լուսավոր հեռանկարներ բերող ուժ, եթե մի փոքր ավելի կոնկրետանանք, ապա իշխանության պարագայում մենք տեսնում ենք, որ խաղադրույքը պատերազմի ու դիլեմայի վրա է: Այս առումով «խաղաղություն» բառը ներկայացվում է որպես կարգախոս, բայց նաեւ այստեղ կա մեկ այլ հանգամանք. եթե խաղաղությունը դուրս ես բերում ասպարեզից, ապա ստացվում է, որ իշխանությունները որեւէ այլ բան չունեն հանրությանը ներկայացնելու՝ առնվազն վերջին հինգ տարվա գործունեության մասով: Փոխարենն այս ամենի՝ կան բազմաթիվ տարածքային եւ մարդկային կորուստներ, իսկ խաղաղության թեզը նրանք ասպարեզ են բերում՝ իրենց բոլոր ձախողումները ծածկելու նպատակով: Քոչարյանի պարագայում ասեմ, որ նրա «միասին» աշխատելու տրամաբանությունը գալիս է դեռ 2003-ից: Այդ տարիներն էլ նա նախագահական ընտրություններին մասնակցում էր «Աշխատենք միասին» կարգախոսով: Երկրորդ նախագահը փորձում է այդ տրամաբանությունը պահպանել առայսօր: Մյուս ընդդիմադիր ուժի՝ Սամվել Կարապետյանի պարագայում դրված է ուժեղ Հայաստանի գաղափարը, ինչը զգալիորեն ասոցացվում է ուժեղ առաջնորդի գաղափարի հետ, իսկ առանցքում Սամվել Կարապետյանն է: Հայկական միջավայրի համար նրա կյանքի աննախադեպ հաջողությունը կարող է որոշակի ազդեցություն թողնել: Այդ ուժը հիմա առաջարկում է Հայաստանն ուժեղացնել: Մնացած ուժերի պարագայում՝ գոնե հիմնական դերակատարների, չկա առանձնապես որեւէ նոր բան: ԲՀԿ-ն էլ ներգրավվել է հավաքական պայքարի գաղափարով: «Առաջարկ Հայաստանին» գաղափարը դարձյալ փորձ է՝ միասնականության հասնելու: Տեսնում ենք, որ ընդդիմադիր ուժերն այս մոտեցմանը կողմ են: Այսօրվա Հայաստանի խնդիրները հաղթահարելի չեն բացառապես մեկ ուժի հետ, շրջանակում: Այնպես որ, պատահական չէ, որ բոլոր ընդդիմադիր ուժերը խոսում են միասնականության մասին:

**- Ասում եք, որ Փաշինյանը, բացի խաղաղությունից, այլ բան չունի ասելու հանրությանը, սակայն Մակրոնն այն կարծիքին է, որ Փաշինյանը «խիզախ» առաջնորդ է եւ պետք է այս ընտրություններում հաղթի: Ի դեպ, թոշակների եւ բժշկական որոշ ծառայությունների անվճար դառնալու հանգամանքը դեր չի՞ խաղա ընտրություններում:**

- Իշխանությունն ինքնին միշտ էլ կարողանում է ինչ-որ քայլերով ձայներ հավաքել, պետք է արձանագրել, որ Փաշինյանի գործողությունները եւս որոշ շրջանակների կողմից ընդունվում են, սակայն այդ ամենի հանրագումարում նա կարող է հազիվ 25-30 տոկոս ձայն ստանալ: Ակնհայտորեն, դա բավարար չէ՝ իշխանությունը պահելու համար: Թոշակ, որոշակի սոցիալական հարցեր, իհարկե, կտան ինչ-որ առումով էֆեկտ, սակայն դժվար թե այն լինի վճռորոշ, քանի որ հասարակության գերակշռող մասը պատկերացնում է, թե ինչ է կատարվում, հասկանում է, որ երբ ընտրություններից 2-3 ամիս առաջ թոշակ ես բարձրացնում, դա նախընտրական կաշառքի տրամաբանության մեջ է, հակառակ դեպքում՝ մարդիկ հարցնում են՝ ինչո՞ւ ընտրություններից շատ առաջ նման բան չէր արվում, ասենք՝ մեկ տարի առաջ: Այնպես որ, դժվար թե այս ամենը վճռորոշ դեր ունենա: Իսկ այն կորուստները, որ ունեցել ենք, այն խոստումները, որոնք անկատար են մնացել եւ դեռ մի բան էլ գլխիվայր շուռ են եկել, այնքան ցցուն են, որ դժվար թե թոշակով հնարավոր լինի ծածկել: Իզուր չէ, որ գլխավոր շանտաժը խաղաղության եւ պատերազմի մասին է: Բայց անգամ դա փաստարկված չէ: Չկա ռացիոնալ փաստարկ: Առավել եւս՝ որ ընդդիմությունն ասում է՝ խաղաղություն է լինելու, պարզապես դրա որակն է լինելու ավելի լավը:

**Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# 1 վայրկյան ավել կանգնելու համար՝ 5 հազար դրամ տուգանք

Տաքսու վարորդից ահազանգ ենք ստացել, որ ճանապարհի երթեւեկելի մասի երկրորդ գոտում 51 վայրկյան կայանել է, որպեսզի տարեց ուղեւորն իջնի, ընդամենը 6 վայրկյան գերազանցել է սահմանված ժամանակը, եւ 5 հազար դրամի տուգանք է եկել: Վարորդը վրդովված էր: Ասում էր, որ ժամանակին 2 րոպեն էր նորմալ՝ ուղեւորին իջեցնելու համար, 2 րոպեի համար տուգանք չէր գրվում, հիմա դարձրել են 45 վայրկյան, իսկ տարեց մարդիկ կան, որ այդքան արագ չեն կարողանում իջնել, եւ ստացվում է՝ հազար դրամ աշխատում են՝ 5 հազարը տալիս են պետությանը: Մեկ այլ վարորդ էլ նշեց, որ ընդամենը 1 վայրկյան ավել կանգառի համար են իրեն տուգանել: Մենք հարցում արեցինք վարորդների շրջանում՝ պարզելու, թե նման իրավիճակների հաճա՞խ են բախվում: Մեզ հետ զրույցում վարորդներից մեկն ասաց. «Ասում են՝ քաղաքացին տուգանքի մատերիալ չէ, ոնց որ վարորդն իրենց համար քաղաքացի չլինի, ոնց ուզում՝ տուգանում են: Իրենց տուգանքների հետեւից որ գնում ես ու ակտերը վիճարկում ես, հիմնականում հաղթում ես, ու տուգանքը բեկանվում է: Ոնց որ տուգանեն՝ տուգանելու համար, ու սա հիմնականում անում են տեսախցիկներով արձանագրվող իրավախախտումների դեպքում»: Բայց պարզ է, որ ոչ բոլորն են վիճարկում տուգանքները, հիմնականում տանում վճարում են եւ պետական գանձարանն են հարստացնում, իսկ իրենք չարքաշ աշխատանք են կատարում, որ մի կերպ ընտանիք պահեն: Իսկ ժամանակին Նիկոլ Փաշինյանն ասում էր՝ վարորդները պետք է հարկ չվճարեն, կարմիր գծերն ու տեսախցիկները վերացնելու եմ: Փաստաբան Ռուբեն Բալոյանը մեզ հետ զրույցում նշեց, որ 59 վայրկյանը լրանալուց հետո իրավախախտումն արձանագրվում է, եւ վարորդը տուգանվում է:

Ոստիկանությունից մեր հարցին ի պատասխան նշեցին, որ հարցը կարգավորվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124 հոդվածի 39-րդ կետով: Միայն կանգառ կատարելու մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն՝ այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղեւորների նստելու կամ իջնելու նպատակով եւ չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, եւ դրա հետեւանքով երթեւեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել: Այսինքն՝ մինչեւ 59 վայրկյան չի տուգանվում, իսկ սկսած 1 րոպեից, տուգանվում են 5 հազար դրամի չափով: Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանն իշխանության էր գալիս կարմիր գծերն ու արագաչափերը հանելու խոստումներով եւ հայտարարում էր, որ «ՀՀ քաղաքացին տուգանքի մատերիալ չէ»: Նրա պաշտոնավարումից ի վեր արագաչափերի քանակը բազմապատկվել է, կարմիր գծերի համար նախատեսված տուգանքների չափը՝ տասնապատկվել, իսկ տաքսիստների կանգնելու 1 րոպեն 1 վայրկյան գերազանցելու համար 5 հազար դրամ տուգանք է սահմանվում:

**Արմինե ՆԱՎՈՅԱՆ**

# 16 ՀԱԶԱՐ ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԴԻԼԻՋԱՆԸ Ե՞ՐԲ ԵԿԵՂԵՑԻ ԿՈՒՆԵՆԱ



Հայաստանում գյուղեր կան, որոնք 2 եկեղեցի ունեն, իսկ զբոսաշրջային քաղաք՝ ավելի քան 16 հազար բնակիչ ունեցող Դիլիջանում եկեղեցի չկա: Հեռավոր արտերկրից, նախկին խորհրդային երկրներից Դիլիջան ժամանած տուրիստները զարմանում են, որ քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած Հայաստանի տեսարժան վայրերից մեկում՝ Դիլիջան քաղաքում, եկեղեցի չկա:

Ավելի քան մեկուկես տասնամյակ դիլիջանցիների կողմից սիրված, հարգված Տեր Շավարշ քահանա Սիմոնյանը հոգեւոր արարողություններ է կատարում եկեղեցու վերածված, Դիլիջանում Թուֆենկյան համալիրի շենքերից մեկի սենյակում: 2015 թվականից Հայ առաքելական եկեղեցին այդ տարածքը վարձակալում է Թուֆենկյան ընկերությունից, այն ժամանակ այդ տարածքի վարձակալության համար եկեղեցին Թուֆենկյան ընկերությանն ամեն ամիս վճարում էր 90 հազար դրամ: Հավանական է, որ անցած տասնամյակում Դիլիջան քաղաքի կենտրոնում գտնվող այդ տարածքի վարձակալության վճարն ավելացած լինի: 2005 թվականին Դիլիջանի համայնքապետարանի պաշտոնաթերթ «Դիլիջանը» գրեց, որ ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգում բնակվող հայազգի Ջոն Սթիվենսը (Հովհաննես Ստեփանյան) Դիլիջանում եկեղեցի կառուցելու համար նվիրաբերել է 1 միլիոն դոլար: Բացի այդ, Դիլիջան համայնքում ստեղծվեց եկեղեցու կառուցմանն օժանդակող հիմնադրամ՝ նպատակ ունենալով եկեղեցու շինարարության համար ներգրավել լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Սակայն շուտով բարեգործ Սթիվենսը մահացավ, Դիլիջանի եկեղեցին էլ չկառուցվեց:

Անցավ 10 տարի: 2015թ. հոկտեմբերի 30-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը Դիլիջանում կատարեց հողօրհնեքի արարողություն, որով տրվեց եկեղեցու կառուցման մեկնարկը: Այդ միջոցառման ժամանակ հայտարարվեց, որ Դիլիջան քաղաքում եկեղեցին կառուցվելու է Սուրբ Էջմիածնի, Դիլիջանի քաղաքապետարանի, Հայաստանի զարգացման հիմնադրամի համատեղ ջանքերով, Ռուբեն Վարդանյանի եւ Գագիկ Ադիբեկյանի բարերարությամբ: Այժմ Դիլիջանի գեղատեսիլ վայրերից մեկում եկեղեցու շինարարության մեծ մասն արված է, դեռ պետք է գմբեթի կառուցման, եկեղեցու ներքին հարդարման աշխատանքներն արվեն: 2025-ին Դիլիջանի համայնքապետարանի կողմից հիմնանորոգվել են քաղաքի Շամախյան թաղամասի մշակութային կենտրոնը, հանրային գրադարանը եւ մեծահասակների ժամանցի սենյակը: Համայնքապետարանի տարածած տեղեկատվության մեջ նշված է, որ այդ ծրագիրը ներկայացվել է Շամախյան թաղամասի բնակիչների կողմից եւ քվեարկության արդյունքում դարձել հաղթող նախագծերից մեկը: Շամախյան թաղամասի վերանորոգված մշակութային կենտրոնի շենքի հետեւում գտնվում է մի քանդվող եկեղեցի: Այդ եկեղեցին գրավոր աղբյուրներում հիշատակվում է որպես Սուրբ Աստվածածին, իսկ ուշ շրջանի մատյաններում՝ նաեւ Սուրբ Պողոս: Եկեղեցու կառուցման ստույգ տարեթիվը չի հիշատակվում: Դիլիջանի բնակիչներից շատերը տեղյակ չեն այս եկեղեցու գոյության մասին: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը 2025 թվականին բարեգործ անհատների աջակցությամբ, դրամական նվիրատվություններով հիմնանորոգել է իր հայրենի գյուղի՝ Հաղարծնի Սուրբ Աստվածածին եկեղեցին: Դիլիջանի բնակիչներից ոմանք ասում են՝ բարեգործների միջոցով, դրամական նվիրատվություններով պետք է իրականացնել նաեւ Դիլիջանի Շամախյան թաղամասի Սուրբ Աստվածածին եկեղեցու հիմնանորոգումը, այն դարձնել գործող հոգեւոր օջախ:

**Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՈՐՆ Է ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼՈՒԿԱՇԵՆԿՈՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Ինչո՞ւ են Ալեն Սիմոնյանը կամ նրա վերադաս Նիկոլ Փաշինյանն այդքան ատում Բելառուսը եւ այդ երկրի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյին եւ, ընդհակառակը՝ չափազանց շատ գնահատում Ուկրաինային եւ այդ երկրի նախագահ Վոլոդիմիր Զելենսկուն: Ալեն Սիմոնյանը Բելառուսին մեղադրել էր դրսից՝ Ռուսաստանից կառավարվելու մեջ, նախորդ օրն էլ հայտարարել է. «Հայաստանը ծայրագավառ չի լինելու, Հայաստանը քաղաքական կախվածության մեջ չի լինելու, Հայաստանն իր ինքնիշխանության մակարդակը բարձրացնելու է: Բելառուսի կառավարման օրինակն իմ երկրի համար եւ ինձ համար անընդունելի է: Հայաստանն ազատ երկիր է՝ իր ազատ մեդիաներով, մարդու իրավունքներով, օրենքի գերակայությամբ»:

Թե որքանով է Հայաստանի քաղաքական կախվածության մակարդակը բարձր Բելառուսի քաղաքական կախվածությունից, կարելի է դատել ընդամենը մեկ օրինակով. որեւէ երկիր չի ստիպում Բելառուսին՝ փոխել իր Սահմանադրությունը, չի ստիպում Բելառուսին՝ հրաժարվել իր Անկախության հռչակագրից, եւ Բելառուսում էլ խոնարհաբար չեն վառ, Հայաստանում երանի են տալու Բելառուսում առկա քաղաքական եւ քաղաքացիական ազատություններին, քանի որ արգելված բառերի ու արտահայտությունների քանակն օրեցօր է ավելանալու:

Սիմոնյանի ատելությունը Բելառուսի եւ Ալեքսանդր Լուկաշենկոյի նկատմամբ ոչ մի կապ չունի 44-օրյա պատերազմի ժամանակ կամ դրանից առաջ Բելառուսի կողմից Ադրբեջանին տրամադրված ռազմատեխնիկական աջակցության հետ, ինչպես ինքն է փորձում ներկայացնել: Ուկրաինան անհամեմատ ավելի մեծ աջակցություն է տրամադրել Ադրբեջանին, Չեխիան արդիականացված հրետանային համակարգեր է մատակարարել, բայց այդ երկրներին ոչ մի մեղադրանք չկա, այդ երկրների եւ դրանց ղեկավարների հետ հարաբերությունները փայլուն են: Ատելությունը Լուկաշենկոյի նկատմամբ դրսեւորվում է ընդամենը մի պատճառով. նա 2020 թվականի ամռանը թույլ չտվեց, որ իր ղեկավարած երկրում տեղի ունենա այն, ինչ Հայաստանում տեղի ունեցավ 2018 թվականի գարնանը, Ալեքսանդր Լուկաշենկոն թույլ չտվեց, որ դրսից կառավարվող եւ ֆինանսավորվող ուժերը Բելառուսում հակասահմանադրական հեղաշրջում՝ գունավոր հեղափոխություն անեն: Ահա թե որն է Փաշինյանի եւ Սիմոնյանի՝ Լուկաշենկոյի նկատմամբ տածած ատելության իրական պատճառը. Լուկաշենկոն նրանց համակարգային թշնամին է, այնպես, ինչպես ՌԴ նախագահը: Թե չէ՝ 44-օրյա պատերազմ, աջակցություն Ադրբեջանին… եթե այդ չափանիշով դատենք, Փաշինյանն ու Սիմոնյանը Ադրբեջանին ավելի շատ են աջակցել, քան Թուրքիան, Բելառուսը, Ուկրաինան, Պակիստանը, Իսրայելը եւ մյուս բոլոր երկրները միասին վերցրած:

Մայիսի 4-5-ը Երեւանում տեղի ունեցած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովը եւս մեկ անգամ ապացուցեց, հաստատեց, որ 2018 թվականի մայիսի 8-ին Հայաստանում տեղի ունեցածը ոչ թե ոչ բռնի, թավշյա ու չգիտեմ էլ ինչ հեղափոխություն էր, այլ՝ դասական գունավոր հեղաշրջում, երբ արտաքին ճնշման, շանտաժի ու բռնության համադրմամբ, գործող քաղաքական մեծամասնությանը ստիպեցին իշխանությունը հանձնել ագրեսիվ փոքրամասնությանը: Պատահական չէր, որ Հայաստան էին հրավիրել հետխորհրդային տարածքում գունավոր հեղափոխությունների բոլոր շահառուներին՝ Մոլդովայի նախագահ Մայա Սանդուին, Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկուն եւ Բելառուսի չկայացած նախագահ Սվետլանա Տիխանովսկայային: Պակասում էր միայն Վրաստանի վարդերի հեղաշրջման կազմակերպիչ Միխայիլ Սաակաշվիլին. նա էլ կլիներ, եթե բանտում չլիներ:

Սա միայն անցյալի մասին չէ, սա միայն 8 տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների գնահատական չէ, սա նաեւ ապագայի մասին է: Մեկ ամիս հետո Հայաստանում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ, եւ այդ ընտրությունները երկրում 8 տարի առաջ տապալված սահմանադրական կարգը վերականգնելու մասին են, որը հնարավոր է միայն հեղաշրջման կազմակերպիչներին հեռացնելով: Վրաստանում դա հնարավոր եղավ անել. 2003 թվականին տեղի ունեցած հեղաշրջումից՝ Վարդերի հեղափոխությունից 9 տարի հետո Վրաստանի ժողովուրդը եւ քաղաքական էլիտան կարողացան խորհրդարանական ընտրությունների միջոցով իրենց երկրում վերականգնել սահմանադրական կարգը: Մի բան, որ հաջողվեց Վրաստանում, միանգամայն հնարավոր է իրականացնել Հայաստանում:

Այն, որ ներկայիս Վրաստանը հակաժողովրդավարական երկիր է կամ գտնվում է Ռուսաստանի ազդեցության տակ, բացարձակ կեղծ ու սուտ պնդում է: Ուղղակի Վրաստանի իշխանությունը եւ ավելի լայն առումով՝ քաղաքական էլիտան համարում են, որ իրենք անկախ պետություն են եւ թույլ չեն տալիս, որ ԵՄ չինովնիկներն իրենց երկրում վարչապետ կամ նախագահ նշանակեն ու ազատեն, մի բան, որն անում են իրենց ազդեցության տակ գտնվող մյուս փոքր ու մեծ երկրներում: ԵՄ-ում էլ դժվարությամբ են հաշտվում դրա հետ: Վրաստանը պրոռուսական լիներ, այդ երկրի վարչապետին չէին հրավիրի ԵՔՀ երեւանյան գագաթնաժողովին, կամ՝ նրանք կհրաժարվեին մասնակցել՝ համարելով, որ դա իրենց տեղը չէ:



Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

# ԱԼԻԵՎԸ «ՉԱՐԻ ՎԵՐՋԸ» ՉԻ՞ ԿԱՐԴԱՑԵԼ

Արցախը մտածված տվեցինք, որ Հայաստանը փրկենք, բայց եթե պետք է՝ Հայաստանն էլ կտանք, որ Նիկոլին փրկենք: Հա, բա ի՞նչ: Ո՛ւմ է պետք Հայաստանն առանց Նիկոլի: Եվ, որպեսզի Հայաստանի հանձնումը շատ ցավոտ չլինի, պետք է այնպես անել, որ հենց Նիկոլը հանձնի Հայաստանը: Նրա մոտ հանձնելը լավ է ստացվում: Հանձնում ենք հաղթելով, հանձնում ենք թշնամուն հոդս ցնդեցնելով, զգետնելով: Իսկ եթե պետք է, որ հենց Նիկոլը հանձնի, ապա առաջիկա հունիսի 7-ին գնում ենք ընտրատեղամաս եւ ընտրում Նիկոլի թիմին: Այդ թիմի անունն է՝ ՔՊ, այսինքն՝ քաղաքացիական պատերազմ, որից չենք խուսափի, եթե չընտրենք իրեն: Բա մեզ քաղաքացիական պատերազմ պե՞տք ա… Լսեցի՞ք, թե Մակրոնն ինչ ասաց: Ասաց, որ ինքն աջակցելու է Նիկոլին, որպեսզի ՔՊ-ն հաղթի, ու քաղաքացիական պատերազմ չլինի: Մի խոսքով, ՔՊ չընտրենք՝ ընկնելու ենք ք.քը: Ավելի լավ է՝ ընտրենք Նիկոլին, Նիկոլը, ինչպես միշտ, թող հաղթելով, Հայաստանը սուսուփուս հանձնի, մենք էլ՝ աշխարհով մեկ խայտառակ չլինենք:

Ավելի լավ է՝ մենք այսօրվանից Հայաստանի Հանրապետության համար նոր անուն որոշենք, մի այնպիսի անուն, որի մեջ «Հայաստան» բառը չլինի: Ալիեւն առաջարկում է «Արեւմտյան Ադրբեջան» տարբերակը, բայց Նիկոլը, կարծես, համաձայն չէ: Ալիեւի առաջարկի մեջ «Նիկոլ» եզրույթը չկա, իսկ դա արդեն խնդրահարույց է պատմականության տեսանկյունից: Բա հետագա սերունդները չիմանա՞ն, թե ով է կործանել Հայաստանի Հանրապետությունն ու հիմնադրել «Արեւմտյան Ադրբեջանը»: Ես Ալիեւին կառաջարկեի մեր երկրի անունը դնել «Նիկոլբայջան» ու դրանով հարցը փակել: Ի՞նչ է պատահել վերջապես… Բա էլ ո՞ր օրվա քիրվան ես, Իլհամ ջան, որ այս փոքրիկ զիջումն էլ չանես: Դրա դիմաց ես Նիկոլին կխնդրեմ՝ չշտապել ՄԱԿ-ում գրանցել այդ «պետությունը»: Մի 30-35 տարի կմնանք որպես չճանաչված հանրապետություն, իսկ հետո, ինչպես ասում են, որտեղ կտրի կապը… Արցախը դրա լավագույն օրինակն է: Չէ, ի՞նչ եմ ասում, Արցախը մասամբ ճանաչված պետություն էր եւ գուցե հետագայում ճանաչվեր, եթե դուք, Իլհամ ջան, Նիկոլի հետ Արցախի գլուխը չուտեիք: Ուստի համաձայնիր՝ Հայաստանի անունը դնենք «Նիկոլբայջան», որպեսզի որոշ անկապ պետություններ միամիտ-միամիտ չճանաչեն այն, եւ դու, Իլհամ ջան, ստիպված չլինես այդ կապակցությամբ մեզ պատերազմ հայտարարել: Թողնենք՝ Նիկոլն աշխատի, իր ձեւով հանձնի, եւ մենք չընկնենք անիմաստ ղալմաղալի մեջ: Հազիվ ենք բարեկամացել…

Շտապողականությունը, Իլհամ ջան, էս գործին խանգարում է: Դու ավելի լավ կանես՝ չորս ոտքով գազ չտաս ու չպահանջես, որ 300 հազար ադրբեջանցի հենց վաղը գա ապագա «Նիկոլբայջան», որ ՀՀ սահմանադրությունը հենց վաղը փոխվի, որ ափալ-թափալ սահմանազատում-սահմանագծում արվի: Դա Նիկոլին պետք չէ, իսկ ավելի ստույգ՝ խանգարում է Նիկոլին շուտ հանձնել-պրծնել: Որ Նիկոլը հունիսի 7-ին չընտրվի, հնարավոր է՝ քո եւ Նիկոլի պատրաստած կղանքը ելնի ավտոբուս: Իսկ որ ելավ՝ վերջ Նիկոլի իշխանությանն էլ, «Նիկոլբայջանին» էլ, 300 հազար ադրբեջանցուն էլ, ՀՀ սահմանադրության ամործատմանն էլ… Հասկանալի արտահայտվեցի, այնպես չէ՞:

Կարող եմ ավելի պարզ արտահայտվել, պարոն Ալիեւ: Հայաստանում իրավիճակն այնքան էլ քո եւ Մակրոնի պատկերացրածը չէ: Այստեղ մարդիկ գիտեն, թե ինչ է սպասվում Հայաստանի Հանրապետությանը, եթե Նիկոլն ու ՔՊ-ն, այդ թվում՝ դու եւ Մակրոնը, հաղթեք ընտրություններում: Եվ այդ մարդկանց մեջ մի փոքրիկ խումբ է միայն համաձայն, որ Նիկոլը մնա իշխանության, իսկ երկիրը կորցնի իր անկախությունն ու դառնա արոտավայր ձեր խաշնարածների համար: Քո քիրվան հայտարարել է, որ եթե ինքը չընտրվի, սեպտեմբերին պատերազմ կլինի: Գիտե՞ս, թե ինչպես են հայերն արձագանքել նրա հայտարարությանը… Ասել են՝ թքած… Թքած սպառնալիքիդ վրա էլ, քաղաքացիական պատերազմի վրա էլ: Ասել են՝ ստախոս, հերիք ու բոլ եղավ՝ գլխներիս «Չարի վերջը» խաղաս:



**ՀԳ.** *Հետաքրքիր է՝ Ալիեւը «Չարի վերջը» կարդացե՞լ է: Եթե ոչ, կարող է Նիկոլից հարցնել: Կպատմի:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan
@hraparak.am

# ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԵՄ-Ի ԵՎ ԱՄՆ-Ի ՄԻՋԵՎ. ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԱԲ-Ի ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՑ

*Մայիսի 5-ին Երեւանում կայացած ՀՀ-ԵՄ առաջին գագաթնաժողովում ընդունված համատեղ հռչակագրի 21-րդ կետն ունի ռազմավարական նշանակություն:*



Այն կոչ է անում կողմերին՝ ուսումնասիրել արհեստական բանականության (ԱԲ) ոլորտում համագործակցության հնարավորությունները՝ համահունչ ԵՄ-ի ԱԲ օրենսդրությանը: Դա ենթադրում է ԱԲ ոլորտում ազգային եւ եվրոպական նորմերի մերձեցում՝ ներառյալ թափանցիկության, էթիկայի, ռիսկերի կառավարման եւ մարդու իրավունքների պաշտպանության պահանջների համադրումը:

Հայաստանի համար սա կարեւոր է՝ եվրոպական միասնական թվային շուկային ինտեգրվելու համատեքստում: Եթե հայկական ընկերությունները եւ հետազոտական կենտրոնները ԵՄ շուկայի համար կամ ԵՄ գործընկերների հետ մշակեն ԱԲ լուծումներ, ապա եվրոպական չափանիշներին համապատասխանությունը դառնում է նախապայման:

Խնդիրն այն է, սակայն, որ ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի մոտեցումներն ԱԲ-ի նկատմամբ դեռեւս բավականին տարբեր են: Եվրոպական քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես կարգավորիչ, իրավապաշտպան եւ զգուշավոր: Բրյուսելը համարում է, որ որոշ ոլորտներում ԱԲ-ի կիրառումը պահանջում է օրենսդրական կարգավորում: Այդ պատճառով ԵՄ-ի ԱԲ օրենքը կառուցված է ռիսկերի կառավարման վրա հիմնված մոդելի շուրջ. որոշ կիրառություններ անգամ արգելվում են, իսկ զբաղվածության, կրթության, առողջապահության, ֆինանսների, արդարադատության, միգրացիայի, կրիտիկական ենթակառուցվածքների բնագավառներում ԱԲ համակարգերի կիրառումը թույլատրելի է միայն որոշակի պահանջների պահպանման դեպքում: Այսպիսով, ԵՄ-ն որոշ բնագավառներում սահմանում է խաղի կանոններ, ինչը հանգում է վարչական եւ իրավական բեռի աճին:

Ամերիկյան մոտեցումն այլ է. այն կենտրոնացած է նորարարության, արագության, ենթակառուցվածքների զարգացման եւ տեխնոլոգիական առաջնորդության վրա: ԱՄՆ-ն ձգտում է պահպանել իր առավելությունը մեծ մոդելների, հաշվողական հզորությունների, կիսահաղորդիչների, ամպային ենթակառուցվածքների եւ ԱԲ-ի առեւտրայնացման ոլորտներում: Ամերիկյան տրամաբանությամբ՝ առաջնային է, որ հնարավոր կարգավորման մեխանիզմները չդանդաղեցնեն տեխնոլոգիական զարգացումը: Թեեւ պետությունը պետք է հաշվի առնի ազգային անվտանգության, արտահանման վերահսկողության եւ այլ ռազմավարական հարցեր, սակայն հիմնական շեշտը դրվում է նորարարության եւ շուկայի վրա:

Հայաստանի համար ԱԲ քաղաքականության այս մոդելների տարբերությունները ստեղծում են եւ հնարավորություններ, եւ ռիսկեր: Մի կողմից, ԵՄ-ի հետ համագործակցությունը կարող է նպաստել Հայաստանին՝ դառնալ առավել վստահելի եւ կանխատեսելի թվային գործընկեր: Սա հատկապես կարեւոր է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են պետական կառավարումը, ֆինանսական, կրթական, առողջապահության, իրավական համակարգերը, կիբեռանվտանգությունը եւ այլ հանրային զգայուն ուղղությունները:

Մյուս կողմից, եվրոպական կանոնների վաղաժամ եւ մեխանիկական տեղափոխումն ազգային ԱԲ էկոհամակարգ կխոչընդոտի ճյուղի զարգացմանը: Ստարտափները եւ հետազոտական կենտրոնները կբախվեն բարձր նորմատիվ պահանջների հետ այն փուլում, երբ դեռ չեն հասցրել ստեղծել վերջնական արդյունք, ներգրավել ներդրումներ կամ դուրս գալ արտաքին շուկա: Արդյունքում կձեւավորվի լրացուցիչ կարգավորիչ բեռ՝ եվրոպական շուկայի, փորձագիտական հմտության եւ կապիտալի բացակայության պայմաններում:

ԱՄՆ-ի հետ համագործակցությունը բացում է այլ հեռանկարներ: Այն կարող է Հայաստանին ապահովել հասանելիություն առաջադեմ ենթակառուցվածքներին, հաշվողական հզորություններին, կիսահաղորդչային շղթաներին եւ ամպային հարթակներին: Եթե Հայաստանը ցանկանում է լինել ոչ միայն ինժեներական ծառայություններ մատուցող, այլեւ ԱԲ արտադրանքների եւ ենթակառուցվածքների մշակման կենտրոն, սա չափազանց կարեւոր է: Բայց այստեղ նույնպես կան ռիսկեր: Ամերիկյան տեխնոլոգիական էկոհամակարգից չափազանց մեծ կախվածությունը կարող է մեծացնել Հայաստանի խոցելիությունն ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական առաջնահերթությունների փոփոխությունների նկատմամբ: Ուստի, ԱԲ-ի որոշ ուղղություններ, ունենալով երկակի նշանակություն, կպահանջեն քաղաքական շրջահայացություն եւ առանձին կարգավորում:

Հետեւաբար, Հայաստանը պետք է խուսափի եվրոպական եւ ամերիկյան մոդելների միջեւ պարզ ընտրությունից: Խելամիտ ռազմավարությունն ԱԲ ոլորտում երկշերտ քաղաքականության ձեւավորումն է: Առաջին շերտն իր տրամաբանությամբ պետք է մոտ լինի եվրոպականին: Այն ոլորտներում, որտեղ ԱԲ-ն ազդում է քաղաքացիների իրավունքների, զբաղվածության, կրթության, առողջապահության, ֆինանսների, արդարադատության կամ պետական կառավարման վրա, պետք է գործեն խիստ կանոններ, որոնք կապահովեն թափանցիկություն, հաշվետվողականություն, ռիսկերի կառավարում, անձնական տվյալների պաշտպանություն եւ անկախ ստուգման հնարավորություն: Երկրորդ շերտը պետք է հնարավորինս համապատասխանի ամերիկյան մոտեցմանը՝ երաշխավորելով նորարարություն եւ ճկունություն: Հետազոտությունների, ստարտափների, վաղ փուլում գտնվող նախատիպերի, ենթակառուցվածքային նախագծերի եւ ցածր ռիսկային առեւտրային լուծումների համար կարգավորումը պետք է բացառվի, ինչը թույլ կտա ապահովել նաեւ ներդրողների համար գրավչությունը: Գործնականում սա ենթադրում է մի քանի քայլ:

Առաջին. Հայաստանը կարող է ընդունել ԱԲ-ի կարգավորման սեփական ռիսկակենտրոն շրջանակը, սակայն այն ներդնել աստիճանաբար: Պետք է հստակ որոշել, թե որ ոլորտներն են Հայաստանի համար իրականում բարձրռիսկային, եւ որոնք պետք է մնան բաց փորձարկումների ու նորարարության համար: Երկրորդ. անհրաժեշտ է ներդնել կարգավորիչ եւ վերահսկվող փորձարկման ռեժիմներ՝ թվարկված սոցիալապես զգայուն, բարձրռիսկային եւ համակարգային նշանակություն ունեցող ԱԲ լուծումների համար: Դրանց շրջանակում ընկերությունները, համալսարանները եւ պետական մարմինները կարող են փորձարկել նոր համակարգերը, մինչեւ դրանց լիարժեք գործարկումը՝ լիազոր կարգավորող մարմնի հետ համագործակցաբար:

Համապատասխան կարգավորումներ կարող է իրականացնել միջգերատեսչական մարմինը՝ թվային քաղաքականության, անձնական տվյալների պաշտպանության, կիբեռանվտանգության եւ համապատասխան ոլորտային կարգավորողների մասնակցությամբ: Սա թույլ կտա վաղ փուլում չխեղդել նորարարությունը, միաժամանակ նախապես բացահայտել քաղաքացիների իրավունքների, անվտանգության եւ հանրային վստահության ռիսկերը: Ցածրռիսկային եւ առեւտրային ԱԲ գործիքները պետք է զարգանան ազատ՝ առանց միջամտության:

Երրորդ. ԵՄ ԱԲ օրենսդրական պահանջները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է գործարկել աջակցության ծրագրեր այն ազգային ընկերությունների համար, որոնք կողմնորոշված են դեպի եվրոպական շուկա: Դրանք կօգնեն բիզնեսին՝ նախապատրաստվել ԵՄ պահանջներին՝ ճիշտ դասակարգել ռիսկերը, ձեւակերպել անհրաժեշտ փաստաթղթերը, կառուցել տվյալների կառավարում, ապահովել թափանցիկություն եւ համապատասխանություն եվրոպական չափանիշներին:

Չորրորդ. Հայաստանը պետք է մշակի ռազմավարական հաշվողական ռեսուրսների կառավարման թափանցիկ քաղաքականություն: Քանի որ ԱՄՆ-ի մասնակցությամբ երկրում ստեղծվում է խոշոր ԱԲ ենթակառուցվածք, ապա դրա հասանելիությունը պետք է լինի թափանցիկ եւ հստակ սահմանված: Առաջնահերթությունը պետք է տրվի արտահանող ընկերություններին, համալսարաններին, ստարտափներին, հետազոտական կենտրոններին եւ հանրային նշանակության նախագծերին:

Հինգերորդ. կարեւոր է առանձնացնել քաղաքացիական ԱԲ-ն, պետական ԱԲ-ն եւ երկակի նշանակության ԱԲ-ն: Քաղաքացիական առեւտրային լուծումները պետք է զարգանան հնարավորինս ազատ: Պետական ԱԲ-ն պետք է լինի առավել թափանցիկ եւ հաշվետու: Իսկ երկակի նշանակության տեխնոլոգիաները կարգավորվեն ազգային անվտանգության, արտահանման վերահսկողության եւ ժողովրդավարական վերահսկողության պահանջներին համապատասխան:

Հռչակագրի 21-րդ կետը, ինչպես նշեցինք, մեզ համար պարունակում է եւ մարտահրավերներ, եւ հնարավորություններ: Հետեւաբար, Հայաստանի ռազմավարական խնդիրն ազգային ԱԲ մոդելի ձեւավորումն է: Այն պետք է միավորի թափանցիկության, պատասխանատվության եւ իրավունքների պաշտպանության եվրոպական չափանիշները՝ արագության, ենթակառուցվածքների եւ նորարարության ամերիկյան կողմնորոշման հետ: Այս համադրությունը թույլ կտա Հայաստանին՝ զարգացնել մրցունակ եւ գրավիչ ԱԲ էկոհամակարգ:

**Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**
**ՀՀ ԳԽ պատգամավոր (1990-95 թթ.)**
**ՀՀ ԱԺ պատգամավոր (1995-99 թթ.)**
**ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան**

# ԻՆՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՈՒՆԻ ԱՄՆ-Ն ԻՐԱՆԻՑ



Ամերիկա-իրանական բանակցություններում ամենաուշագրավ կետը Իրանի կողմից ուրանի հարստացման 20-ամյա մորատորիում հայտարարելու դրույթն է, որը քննարկվելու է այն ժամանակ, երբ կողմերը հասնեն համաձայնության՝ գրում է The Wall Street Journal պարբերականը: ԱՄՆ-ն նպատակ է հետապնդում, որ Իրանի հետ կնքվելիք գործարքում ամրագրվի մի քանի դրույթ.

- Հաստատում, որ Իրանը չի ձգտում ունենալ միջուկային զենք
- Ֆորդոյի, Նաթանզի եւ Սպահանի միջուկային օբյեկտների ապամոնտաժ
- Իրանում ստորգետնյա միջուկային աշխատանքների արգելում
- Պահանջի առկայության դեպքում տեսչական ստուգումների անցկացում, իսկ հայտնաբերված խախտումների դեպքում՝ նաեւ սանկցիաների սահմանում
- Հորմուզի նեղուցի ապաարգելափակում
- Ապագայում Իրանի դեմ սանկցիաների հնարավոր մեղմացում:

Ռուս փորձագետ Իրինա Ֆյոդորովան «Վեստնիկ Կավկազա» պարբերականի հետ զրույցում նկատում է, որ Թեհրանի միջուկային ծրագրի հանդեպ ԱՄՆ պահանջները շարունակում են մնալ նույնքան կտրուկ, որքան նախկինում էին, ուղղակի՝ ավելի դետալացված: ԱՄՆ-ն պահանջում է, որ իրանական 400 կգ բարձր հարստացվածության մակարդակի ուրանի պաշարը դուրս հանվի երկրի տարածքից, եւ Թեհրանը դադարեցնի ուրանի հարստացումը: Դրանք այն պայմաններն են, որոնք, ամերիկյան կողմի կարծիքով, երաշխավորում են, որ Իրանը չի կարողանա ձեռք բերել միջուկային զենք եւ 20 տարի չպետք է ուրան հարստացնի՝ նույնիսկ 3,67 տոկոս հարստացվածության ուրանն ընդունելի չէ, որը նախատեսված էր Միջուկային գործարքի համաձայնագրով: Սակայն Իրանն էլ իր «կարմիր գծերն» ունի՝ չնայած ամեն փուլում պահանջներն ԱՄՆ-ի հանդեպ մեղմացնում է, սակայն միջուկային ծրագրի հարցում զիջումների գնալու պատրաստ չէ: Եվ բանակցությունների դինամիկան շարունակում է մնալ անհայտ, որովհետեւ իրանական էլիտաներում այդ առնչությամբ տարբեր տեսակետներ կան: Բարենորոգիչները կարծում են, որ անհրաժեշտ են նորմալ հարաբերություններ Արեւմուտքի հետ, գնալ զիջումների, հասնել տնտեսական սանկցիաների վերացման, պահպանողականները եւ հատկապես Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը դրան դեմ է: Ու այդ անորոշությունն առկա է նաեւ պաշտոնական հայտարարություններում:

**Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՈՉ ՈՔ ԿՈՉ ՉԻ ԱՆՈՒՄ՝ ԵՂԱՆՆ ՈՒ ՓՈՑԽԸ ՎԵՐՑՐՈՒ, ԻՋԻՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ, ԱՍՈՒՄ ԵՆ՝ ՎԵՐ ԿԱՑ ԹԱԽՏԻՑ՝ ԳՆԱ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍ

*Հարցազրույց գրող, գրականագետ **Կարո Վարդանյանի** հետ*



**- Փորձենք հասկանալ, թե ինչ կատարվեց մեզ հետ վերջին 8 տարում:**

- Շատ դժվար է, Աստված չանի, եթե այս դավադրությունը հասնի իր վերջաբանին՝ ինչպես հեղինակները նախագծել են, այդ ժամանակ ինչ-որ հանգրվանում մենք կարող ենք նստել եւ ամփոփել: Բայց այսօր՝ 8 տարի անց, դեռ այդ համատարած գիտակցությունը չկա, թե ինչի մեջ ենք մենք: Իսկապես չկա, մենք դեռ գզվռտոցի մեջ ենք: Կան մի քանի տասնյակ գիտակից մարդիկ, որ բաց նյարդերով նայում են ամեն օրվան, ամեն ժամին: Բայց այս պահի խնդիրն այն անգիտակից, չարորակ զանգվածը չէ միայն, նաեւ մեր արվեստակիցներն ու արհեստակիցներն են: Մեծ մասն ասում է՝ ի՞նչ է եղել որ, բա լա՞վ էր նախկինների ժամանակ: Այս կեցվածքը, այն էլ՝ մտավորականի կողմից, համատարած է: Տակավին մեկ շաբաթ առաջ, մի գրառման համար ինձ սաստողների մեջ կային վաստակավորի ու ժողովրդականի կոչումներով ոչ անհայտ երկու գործիչ, մեկը՝ նկարիչ, մյուսը՝ երաժիշտ, թե լա՞վ էր, որ Ռոբերտը զուգարանում մարդ սպանեց: Սրանք ամեն ժամ են մի բան կործանում, եթե մեկը փորձում է կցկտուր բարձրաձայնել, սրանք անմիջապես այդ մի դեպքն են հիշում, դեռ լավ է, որ երկրորդը չկա, որ հիշեն: Սա ինքնակործան մի հործանուտ է, որի դեմն առնելը, ինչ-որ չափով կասեցնելը միայն գիտակցաբար սթափվելու խնդիր է, որին մենք դեռ չենք հասել: Իսկ ժամանակը չի սպասում:

**- Վատ արարքը նախկիններին չեն ներում, իսկ սրանց գործած առավել վատթարն արդարացնում են: Աններելին հավասարապես բոլորի դեպքում պետք է դատապարտվի: Սա երկակի ստանդա՞րտ է, որը, մեղմ ասած, բարոյական չէ:**

- Երկակի ստանդարտ չէ: Մենք դեռ ավանդական մտածողությամբ ենք տրամաբանում, փորձում ենք այս խիստ անսովոր, անծանոթ աղետը տեղավորել մեր դասական պատկերացումների մեջ: Հենց այստեղ է, որ ներքին բախում է տեղի ունենում, ու չենք կարողանում հասկանալ: Եթե նախկին ղեկավարներից մեկն ասեր, թե ինչ եք աչքներդ չռել Արարատի վրա, դա վաղուց հարեւան երկրինն է, դուք ձեր սարին նայեք, ոչ թե կիսակաճառեին, այլ ամբողջ հայ աշխարհը՝ Հայաստան եւ սփյուռք, կփոթորկվեր: Կամ ասեին, որ Արցախը թոկ է, որ պետք է մեր 5-հազարամյա ամենահայկական երկրամասից ազատվենք, որպեսզի պետություն ունենանք, խելագարի տեղ կդնեին կամ առնվազն թուրքի գործակալ կհամարեին: Իսկ այս 8 տարվա մեջ հարյուրավոր, հազարավոր հակահայ ու ազգադավ խոսք եւ խոսքին հետեւած գործ տեսանք: Նախկինում արձագանքն այն կլիներ, որ կարճ կյանք կունենար այդ ամենը: Բայց այդ նույն բանը, որ անում է ՔՊ-ականը, ընդունվում է բնական: Սրան ասում են հիբրիդային պատերազմ, հոգեբանական գրոհ: Ես ի՞նչ զենք կիրառեցին մեր դեմ: Ես տարիներ առաջ երգիծանքով գրել էի՝ Քեռի Թորոսը եւ Քեռի Սորոսը: Քեռի Թորոսը, որ բարդու ծառը քոքահան էր արել ու Սասունի սահմաններն էր պաշտպանում, հանկարծ նրա դիմաց է հայտնվում սեւ ցիլինդրով, սեւ ակնոցով, սիգարը բերանին Քեռի Սորոսը: Ի՞նչ պիտի անի ավանդական մտածելակերպով տոհմիկ հայը՝ Քեռի Թորոսը, էս դիվային, ճիվաղային տեխնոլոգիաների դեմ: Անպաշտպան ենք եւ նույնիսկ չենք կարողանում գիտակցել, թե ինչպիսի զենք է մեր դեմ կիրառվում հետեւողականորեն: Իսկ ովքեր էլ որ գիտակցում են, թե ինչ է տեղի ունենում մեզ հետ, էդ վիրավորանքը, ստորացումն անտանելի է, մենք գիտափորձի ինչ-որ օբյեկտի ենք հիմա վերածվել: Եվ բանուգործը թողած՝ այսօր ամբողջ Արեւմուտքն ընտրություններից առաջ լցվել է Հայաստան՝ էդ «գիտափորձը» վերջնական արարին հասցնելու համար: Ես նաեւ որոշակի մտահոգություն նկատեցի դրանց մոտ. հանկարծ չձախողվի՜ վերջին հանգրվանը:

**- Փորձենք բացատրել, թե ընտրությունների նախաշեմին ինչ նպատակ է հետապնդում Եվրոպայի առաջնորդների գալը Երեւան եւ ակնհայտ աջակցությունը Փաշինյանին:**

- Տասնյակ միլիոնավոր եվրոներ տվեցին վերջերս՝ իբր օտար ազդեցությունների դեմն առնելու համար: Այդ ֆինանսավորելն ընտրություններից մի ոտք առաջ՝ արդեն միջամտություն է մեր երկրի ներքին գործերին: Հիմա էլ եկել են, տեսեք, թե ի՜նչ հեղինակավոր երկրների ղեկավարներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, լցվել են Հայաստան, Երեւանի ու Գյումրու փողոցները դարձրել խրախճանքի, կերուխումի վայր: Արդեն որոշակի տրտունջներ, բողոքներ են ուշացումով հասունանում մեր երկրում: Ես շատ կոգեւորվեի, եթե զգայի, որ նույնիսկ ուշացումով իմ ժողովուրդը սթափվել է: Ցավոք, ազդակը սոցիալական է, մենք այդպես էլ չունեցանք այն գիտակցությունը, որ կործանում են մեր երկիրը: Պարզապես մարդիկ 2 անգամ՝ ուղեղներն անջատած, գնացել, ձայն են տվել սրանց, որպեսզի լավ ապրեն, կուշտ սնվեն, քեֆ անեն, ու կանգնել են կոտրած տաշտակի առաջ: Ահա՝ Եվրոպայից եկել են՝ ցուցադրաբար կերուխում, ցինիկ խոստումներ, տեսեք, թե ինչպես են ազդում խոցելի գիտակցությամբ մեր հանրության վրա: Սա է նպատակը:

**- Ունե՞ք մտավախություն, որ եվրոպական շղարշի տակ փորձում են Հայաստանը մեր ոտքերի տակից տանել, ինչպես Արցախը տարան: Արդյո՞ք Հայաստանը գլխացավանք չէ Եվրոպայի համար, եւ հեշտ լուծումն է՝ դարձնել թուրքական տարածք:**

- Հենց դրա մասին ենք խոսում. միանշանակ: Ինչո՞ւ պետք է սպասենք, որ կործանվենք, հետո բացահայտումներ լինեն: Մենք էլ՝ որպես 21-րդ դարի սփյուռքահայեր, Եվրոպայի, Արեւելքի կամ Ռուսաստանի ճանապարհներին հանդիպենք ու վերլուծենք, գզվռտվենք, թե ինչու եղավ, ինչպես ցեղասպանությունից ու հայրենազրկումից 3-4 սերունդ հետո մինչեւ հիմա միմյանց մեղադրում ենք: Մակրոնն էլ այս ամբողջ աղետի 3 դարբիններին՝ Խաչատուրյան Վահագն, Փաշինյան Նիկոլ, Հարությունյան Արայիկ, պատվեց ֆրանսիական կառավարության բարձրագույն պարգեւով՝ Պատվո լեգեոնի շքանշանով, որը Նապոլեոն կայսրն է հիմնել եւ տրվում է այն ֆրանսիացի եւ օտար անձանց, ովքեր մեծ ծառայություն են մատուցել Ֆրանսիային: Մոտ 200 հայ երանելիներ կան, որոնց պատվել են այդ շքանշանով, եւ գիտենք, թե ինչու, բայց չգիտենք, թե սրանց ինչու: Տպավորություն չստեղծվի, թե Մակրոնը քոռուփուչ է անում այդ պարգեւը: Որովհետեւ Արցախի հանձնումն ու հայաթափումն ընկալվում են ծառայություն Արեւմուտքին, իսկ Ֆրանսիան Արեւմուտքի խորհրդանիշն է, եւ Հայաստանի աստիճանական հանձնումն Ադրբեջանին ու Թուրքիային՝ ընկալվում է որպես ծառայություն Ֆրանսիային: Սա լեգենդ չէ: Մեզ 8 տարի կերակրելով ժողովրդավարության արժեքներով՝ գլորեցին ֆեոդալական կարգեր: Նույնիսկ դուր չեկած հայացքի համար են ձերբակալում, ուր մնաց թե՝ կարծիք հայտնես: Այսքան գաղտնալսումներ, բարբարոս ոտնահարում մարդու կարեւորագույն իրավունքների: Անգամ մարտական ռումբ նետեցին ժողովրդի վրա, եւ չկա որեւէ ծպտուն: Վախենում եմ, որ եկել են ոգեւորելու, թե նկարեք ձեր թվերը, մենք կհաստատենք, կօրինականացնենք: Եվ մեր խեղճ ու անպաշտպան ժողովուրդը, որքան էլ որ մենակ է մնացել, պետք է գոնե այն գիտակցումն ունենա, որ իր ձայնը որոշիչ է: Ձեռքերը լվանալ-հուսահատվելն ամենակործանարար մտածողությունն է: Ճիշտ են անում, որ այս ընտրությունները համեմատում են Սարդարապատի հետ: Այն ժամանակ էլ մեր վերջաբանն էր: Բայց այսօր ռեստորան ու սրճարան սիրող հայ մարդուն ոչ ոք կոչ չի անում, թե եղանն ու փոցխը վերցրու եւ իջիր Սարդարապատ՝ նահատակվելու, ընդամենը՝ մի՛ ալարիր, վեր կաց թախտից եւ գնա ընտրատեղամաս: Տանո՛ւմ են, երկիրդ տանո՛ւմ են. սա է խնդիրը: Գնացեք եւ ձեր մեկ հատիկ ձայնով այս ամենի դեմը փորձեք առնել:

**- Դա առաջին պարգեւը չէր, Ղազախստանի նախագահն էլ վզնոց կախեց Նիկոլի վզից՝ թուրանական միջանցք տալու համար: Այդպես ճակատը պաչելով, մեդալ կախելով՝ ժողովրդին թմրեցնում եւ երկիրն են տանում:**

- Այդ պարգեւները խրախուսանքի միջոցներ են, որ ոչ միայն կատարեցիր ստանձնածդ պարտավորությունները, այլեւ՝ 10 անգամ ավելին: Տեսնում են, որ սա ջանք ու եռանդ չի խնայում՝ ավելին անելու համար: Որեւէ մեկը հավատո՞ւմ է, որ Փաշազադեն կամ Ալիեւն այդքան մանրացել են, թե դպրոցներից հանիր նահատակների նկարները, կամ նման փոքրիկ դրսեւորումներ: Իրենք ընդհանուր խնդիրն են դրել. փոխել այս հինավուրց ազգի գենետիկան: Իսկ սա ինքնանպատակ դարձնում է մանկուրտ: Նրանք այդ կարգի մանրակրկիտությամբ չեն պահանջում, որքան սրա ջերմեռանդությունն է, որ պարզապես խելագարեցնում է:

**- Ալիեւը համաժողովում մատ թափ տվեց ԵԽ-ի վրա, որ հայանպաստ բանաձեւ է ընդունել: Մեր գերիներին պատերազմի հանցագործ անվանեց, իսկ Փաշինյանը լռեց, միայն ԵԽ նախագահը պատասխանեց:**

- Սա այս դավադրության մեխերից մեկն էր՝ լավ բեմադրված: Մի քոչվոր թափառախմբի պարագլխի ամբարտավանությունն այն աստիճանի է հասել, որ սպառնաց Եվրոպայի առաջնորդներին: Իհարկե, Հայաստանից չպետք է ծպտուն լիներ. մեր ղեկավարության դերակատարումն Ալիեւի հայտարարությունները հիմնավորելն է, ասել, որ մարդիկ իրենց ինքնիշխան տարածքում ինչ ուզում, անում են: Իսկ ամենաողբալին այդ եվրոպացի տիկնոջ պատասխանն էր, որն ընդամենը արդարացավ, փոխանակ սաստեին, թե՝ այ քոչվոր, ախր, աչք փակեցինք, մի բան էլ սատարեցինք, որ այս ամենը քեզնով անես, հիմա մեզ վրա մա՞տ ես թափ տալիս: Ազերին, երեկվա թաթարը Եվրոպայի վրա մատ թափ տվեց... Կարող էին տեսակապը միանգամից անջատել: Հերիք չէ լայաղ չես արել գալ, դեռ որոշել ես տեսակապով այսքան մարդու ստորացնել, մա՞տ թափ տալ: Ցավոք, այս այլանդակ ֆարսի մեջ Հայաստանը դեր չունի, լեզու չունի, ընդամենը սեղանին դրված դեսերտ է այս պահին:

**- Երբ անգետը հաղթում է գիտունին, պարտվում է երկիրը: Մեր միտքը չկարողացավ իշխել մեր անմտությանը: Մտավախություն չկա՞, որ կրկնվելու է նույնը:**

- Ոչ, ոչ: Այդպես հուսահատված, ջլատված էի 2-3 տարի առաջ: Այս նոր շարժումները, թեկուզեւ ոչ հստակ նկատելի, ինձ ոգեւորում են: Դժգոհությունը համատարած է, դա ես նկատում եմ: Էդ կործանարար մասսան էլ չկա, որ լցվի ընտրատեղամաս՝ իրենով անի, որը ոչ միայն երկիրն է կործանում, այլեւ, առաջին հերթին՝ ինքն իրեն, ինչը չի հասկանում: Խնդիրն այն է, որ որեւէ մեկը չպետք է ձեռքերը լվանա եւ մնա տանը: Ընդամենը մեկ ամիս առաջ տեսանք, թե Հունգարիայում ինչ կատարվեց: Օրբանն իր երկիրը չէր տանում կործանման, պարզապես ճահճացել, լճացել էր: 70 տոկոս մասնակցություն եղավ ընտրություններին, որ Եվրոպայի համար աննախադեպ էր: Արտերկրից տասնյակ հազարավոր հունգարացիներ էին եկել, որ իրենց երկիրն Օրբանի ճանկերից ազատեն: Իսկ այսօր ՔՊ-ն տագնապած է, խուճապի մեջ է: Տեսեք՝ գալիս է հայ մարդը օտար երկրից, եւ նրանք քիչ չեն: Իսկ ինչպե՞ս են արձագանքում սրանք՝ թե փող են տալիս, բերում են: Ցինիկ, այլանդակ արձագանք: Մարդիկ գալիս են, որ իրենց ձայնը տան, եւ ինչպե՞ս են ներկայացնում՝ փող են տվել: Ես հույս ունեմ. եթե Հունգարիան, որ վտանգ չուներ կործանվելու, բայց հունգարական սփյուռքից եկան եւ վտարեցին Օրբանին, մենք առավել եւս 70-80 տոկոս պետք է մասնակցություն ունենանք: Այդ դեպքում դրանց համար թիվ նկարելն էլ է դժվարանալու, եվրոպացիների միջամտությունն էլ է անտեղի լինելու: Մենք ոչինչ չարեցինք այս 8 տարվա ընթացքում, որ Նախախնամությունը, Տերը մեզ երրորդ շանսը տա գոյատեւման, բայց, այնուամենայնիվ, այդ շանսը տրվել է մեզ: Եվ մենք կլինենք ստորագույն ժողովուրդ, եթե պատվով, գիտակցաբար այդ շանսից չօգտվենք: Պարզապես մարդկության անեծքին կարժանանանք:

**Հուսիկ Արա**

# ԴՈՒՔ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ Ո՞Վ ԵՔ, Ի՞ՆՉ ԵՔ ՁԵԶՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ



Իհարկե, գլխի ընկաք, որ սա մեծարգոյի մտքի «գոհարներից» է՝ ուղղված ընդդիմությանը: «Դուք ո՞վ եք»: Ասել կուզե՝ ես աշխարհի մեծամեծների հետ նստում-վեր եմ կենում, կառավարության նիստին նախարարներն իմ՝ ներս մտնելիս ոտքի են կանգնում, դուք եկել՝ սատանի մայլեն քյանդրբազություն եք անում:

Վերջերս մահկանացուն կնքեց իրավապաշտպան Ավետիք Իշխանյանը: Ասում են՝ Արցախի, հազարավոր տղաների կորստի ցավը քայքայեց նրա հոգին ու մարմինը: Չդիմացավ: Մարդը երբեք գործարքի չգնաց իր խղճի հետ: Սա ասում էին եւ նրանք, ովքեր մեր ողբերգության համար իշխանության հասցեին մի երկու թեթեւ կսմիթից հետո գտնում էին, որ... բոլորս ենք մեղավոր, եւ փոսից դուրս գալու իրենց բանաձեւն ունեին՝ յուրաքանչյուրը պետք է զբաղվի իր գործով:

Եթե բոլորս, գլուխներս կախ, մեր գործը պիտի անենք, հարց՝ ինչո՞ւ էր Հովհաննես Թումանյանը (որի անունով կոչվում է ձեր թատրոնը) ազգի դարդուցավով տապակվում: Ի՞նչ գլուխգործոցներ կարող էր ստեղծել, եթե լսեր Ձեզ... Ինչո՞ւ էին 88-ին Մոսկվայում Արցախի հարցի արդարացի լուծման պահանջով հացադուլ անում աշխարհահռչակ Վիկտոր Համբարձումյանը (82-ամյա), թատրոնի նահապետ Սոս Սարգսյանը, գրող Զորի Բալայանը, այլ մտավորականներ եւ նույնիսկ Վազգեն Առաջին Վեհափառը:

Հակոբ Մովսեսի գործը, կարծես թե, գրելն է, բայց խցկվում է կեղտոտ քաղաքականության մեջ, իրեն հատուկ խոհափիլիսոփայական խուճաճանքով թիկունք կանգնում վարչապետին (ուր ենք հասել, որ ազգիս բանաստեղծ կոչվածի բարեվարքության հարցն է քննարկվում ԱԺ-ում), իրեն պատեպատ խփելով՝ արդարացնում նրա ակնհայտ հակահայ քայլերը (իսկ ի՞նչ է մտածում «Գարունի» նախկին խմբագիր Մերուժան Տեր-Գուլանյանն իր նախկին աշխատակցի մասին):

Ի վերջո. ո՞վ եք, ի՞նչ եք ձեզնից ներկայացնում, հայ մտավորականներ: Մեզ նորանոր փորձանքներ խոստացող այս քաոսում ձեր խոսքը ե՞րբ պիտի լսվի: Իսկ այդ պահին այն արժեք կունենա՞: Հարգանքի է արժանի Գուրգեն Խանջյանը՝ գրողական իր ճշմարիտ ու համարձակ կեցվածքի համար, բայց նա, ցավոք, Ցիցերոն չի դառնա... Բա չեք ասի՝ մենք նաեւ Գիտությունների ազգային ակադեմիա ունենք, որի ստեղծումը կարեւորվել է երկրի համար դաժանագույն՝ 1943 թվին: Հիմա՝ 83 տարի անց, վերացման եզրին է: Տարեկան ընդհանուր ժողովից հետո, լրագրողի դիտարկմանը, թե այս անգամ չկային նախորդների սուր ելույթներն ու բանավեճերը, որ գիտնականները զգուշավոր էին ու պասիվ, ակադեմիկոս Յուրի Սուվարյանն արդարանում է. «Մենք սկսել ենք քաղաքակիրթ ակադեմիական ոճով մեկնաբանել ամեն ինչը... Այս տարվա ժողովի առանձնահատկությունն այն էր, որ ավելի ակադեմիական, բարձր մակարդակով էին արտահայտում մտքերն ու գաղափարները»: Ուզում ես ասել՝ այ հեր օրհնած, եթե սա էր ձեր թափը, ի՞նչ էիք, ջուրը չտեսած, քշտել փողքերդ, թե՝ պահանջում ենք վարչապետի հրաժարականը: Գոնե Հովսեփ Օրբելուց ամաչեք...

Ազգի մեծությունը չի չափվում նրա թվով, ինչպես մարդու մեծությունը չի չափվում նրա հասակով, միակ չափորոշիչը նրա մտավոր զարգացածությունն է ու բարոյական մակարդակը: Վիկտոր Հյուգոն այս տողերը գրելիս գուցե մեզ էլ է նկատի ունեցել: Մտավորի հարցում Աստված տվել՝ չի խնայել: Գիտության, արվեստի եւ գրականության ի՛նչ գիգանտներ ենք նվիրել աշխարհին, իսկ, ահա, բարոյական մակարդակը, հատկապես՝ այսօր, ողբալի է: Ինչ-որ տեղ «հասկանալի» եւ օրինաչափ է համարվում փոքրումեծ պաշտոնյաների կաշառակերությունը, բայց երբ կրթության ոլորտն է պղծվում, սա, ինչպես ասում են, վերջն է: Վերջերս Մանկավարժական համալսարանի, Ֆիզկուլտուրայի ինստիտուտի, այլ բուհերի պաշտոնյաներ մեղադրվել են ապօրինությունների ու կաշառակերության մեջ: Այս մարդիկ երկար ժամանակ մանկավարժներ են պատրաստել...

Պատկերացրեք մի երկիր, որի բրենդային համարվող համալսարաններից մեկի՝ տնտեսագիտականի ռեկտորը, պարզվում է... շարքային գող է: Քչերը գիտեն, որ Դ. Գալոյանը 2017-ին ԱՄՆ-ում, հագուստի խանութից ինչ-որ բան թռցնելիս բռնվել է, 2 օր նստել բանտում, 30 օրվա հարկադիր աշխատանք էին նշանակել՝ 3 տարվա փորձաշրջան, պարտադրել, որ մեկ տարի անց ներկայանա՝ պահանջների կատարման ապացույցներով: Սակայն տիկինը չի ներկայացել, եւ դատարանի կողմից տրվել է ձերբակալման հրաման եւ հետախուզում: Արտառոցն այն է, որ դատապարտված եւ հետախուզվող տիկինը 2020-ին կառավարության որոշմամբ ստանձնում է բուհի ռեկտորի պաշտոնը: 2023-ին հիշեցին այս գործի մասին, աղմուկից շատ չանցած՝ «հերոսը» ճարահատյալ հրաժարական տվեց: Գուցե պետք չէր այս կերպարին անդրադառնալ, բայց պատեհապաշտները, պատվախնդրությունից ու արժանապատվությունից զուրկ մարդիկ են քանդել ու քանդում մեր չքնաղ երկիրը:

Հիմարագույն թեզ, որ հիմնականում լսում ես մորթապաշտների կողմից: Այս միտքը գեներացնողներից մեկը լուսահոգի մտավորական Արման Մանարյանի կողքին չգիտես ինչու եւ ինչպես հայտնված Տիկնիկային թատրոնի գեղղեկավար Ռուբեն Բաբայանն է (այս մտքի հետ համերաշխ է նաեւ ըմբոստ մաեստրո Օհան Դուրյանի որդին, քաղաքականությունից սարսափող Նարեկը. ճ, լա, լա...): Որին ուզում ես հարցնել՝ բա ինքդ ի՞նչ գործ ունես քաղաքականության հետ, մարդ Աստծո:

Սիմոն ՀԱԿՈԲՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 8.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

# ԵՎՐՈՊԱՆ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԵՎԵՐԻ ՏԱԿ ՃՄԵՐՈՒԿ ԴՐԵՑ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՏՔԻ ՏԱԿ՝ ՕՃԱՌ




2 օր հետեւում էի ԵՄ գագաթնաժողովի ընթացքին, այն, որ այս ամբողջից հրճված էր ՀՀ իշխանությունը, հասկանալի էր, սակայն ինչի վրա էր ուրախացել ժողովրդի որոշ հատվածը, ինքնամոռաց սելֆիներ էր անում Ֆրանսիայի նախագահի հետ, այ, դա շատ անհասկանալի էր: Թեեւ չեմ բացառում, որ դրանք իշխանության դրածոներն էին, հակառակ դեպքում՝ թույլ չէին տա մոտենալ Մակրոնին...

Միեւնույն ժամանակ, չեմ վիճարկում՝ այսօր կարող են լինել մարդիկ, որ մեկ օր շուտ ցանկանում են նետվել Եվրոպայի գիրկը, ինչպես ասում են՝ իրենց ընտրությունն է. գուցե հայ ազգի եւ Հայաստանի փրկությունը տեսնում են ա՛յդ ճանապարհով: Սակայն ստիպված եմ հիասթափեցնել նրանց: Նախ հիշեցնեմ, որ 44-օրյա պատերազմի, դրանից հետո Ստեփանակերտը շրջափակման մեջ պահելու ողջ ընթացքում, 2023-ին արցախցիների բռնի տեղահանման ժամանակ ԵՄ-ն, ԵԱՀԿ-ն, հայտարարություններից բացի, որեւէ գործնական քայլ չիրականացրին Ադրբեջանի նկատմամբ: Անգործություն ցուցաբերեցին նաեւ այն ժամանակ, երբ Ադրբեջանը չկատարեց Եվրադատարանի մի շարք որոշումներ՝ կապված հայ-ադրբեջանական կոնֆլիկտի (այսինքն՝ 2020 եւ 2023 թթ. Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո), հայ ազգաբնակչության, գերիներին ազատ արձակելու պահանջների, Չինարիում զոհված հայ զինվորների նկատմամբ չհիմնավորված օդուժի կիրառման հետ եւ այլն: Ցանկը կարելի է երկար թվարկել: Եվրամիության կողմից անգործություն է դրսեւորվել անգամ այն պահին, երբ Ադրբեջանն ապօրինաբար դատում է Արցախի (ԼՂՀ) նախկին պաշտոնյաներին, ոչինչ չի արվում, երբ ադրբեջանական վանդալներն Արցախում ոչնչացնում են քրիստոնեական արժեքները՝ հայկական հետքը: Այս ամենի դիմաց միայն հայտարարություններ եւ չպարտավորեցնող բանաձեւեր...

Մինչդեռ, նույն Ֆրանսիայի նախագահի նախաձեռնությամբ ԵՄ-ն, ԵԱՀԿ-ն կարող էին Ադրբեջանի ցեղասպան քաղաքականության դեմ կիրառել տնտեսական պատժամիջոցներ, անգամ հիմա ուշ չէ: Սակայն նման բան Էմանուել Մակրոնը չի անի, ավելի հեշտ է ստել, թոզ փչել հայ ժողովրդի աչքերին եւ ձեռքի հետ Ռուսաստանին կծելով ասել. «8 տարի առաջ այս երկիրը դիտարկվում էր որպես Ռուսաստանի դե ֆակտո արբանյակ, եւ 8 տարի առաջ ոչ ոք չէր գա Հայաստան»:

Այսպիսով, մի կողմից՝ Փաշինյանի թեւերի տակ ճմերուկ դրեց, մյուս կողմից՝ հայ-ռուսական հարաբերություններում փորձեց սեպ խրել, մի խոսքով, իր շահով առաջնորդվեց: Ի դեպ, կարմիր գորգի վրա Մակրոնին ուղղված հարցը՝ Հորմուզի նեղուցի հետ կապված, եւս նրա շահերից էր բխում, որ եւս մեկ անգամ նա ԱՄՆ նախագահին պատասխանի: Մեկ դիտարկում եւս. սա Մակրոնի երկրորդ այցն է Հայաստան: Հիշեցնենք. նա Ֆրանսիայի նախագահ է դարձել 2017-ին, իսկ 2018-ի հոկտեմբերին այցելել է Հայաստան՝ Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում: Ինչ վերաբերում է մինչ այս Հայաստան Ֆրանսիայի նախկին նախագահների այցերին, ապա հայկական լրատվամիջոցները մանրամասն ներկայացրել են այդ այցերը, անգամ տեսաձայնագրություններ կան:

Երկրորդ կարեւոր գործոնը, որի մասին չպետք է մոռանալ, այն է, որ Հայաստանն ընդհանուր սահման չունի եվրոպական որեւէ երկրի հետ: Այս տեսակետից Հայաստանը չխառնեք Ուկրաինայի աշխարհագրական դիրքի հետ, որտեղ եվրոպական երկրները, իրենց շահերից ելնելով, կռվում են ՌԴ-ի դեմ, որի արդյունքը տխուր է լինելու, Ուկրաինայից, ինչպես ասում են, կարող են մնալ «պոզերն ու պոչը»...

Երրորդը. չմոռանանք պատմությունը: 1915-ին Եվրոպան պրոհայկական հայտարարություններով, հումանիտար օգնություններով էր հանդես գալիս, սակայն գործնականում թուրքի ցեղասպան ձեռքից հային ու Հայաստանը պաշտպանողը եղավ Ռուսաստանը: Սա պատմական փաստ է: Պատմական փաստ է նաեւ, որ եվրոպական մի շարք երկրներ, այդ թվում՝ Անգլիան, «տակից» սպասարկել են թուրքական շահը: Այնպես որ, 1 դար անց, ցավոք, պատմությունը կրկնվում է...

Այսօր հայ ժողովրդին Հայաստանում գովաբանելը նման է չլարված թակարդի մեջ դրված պանրի, որը մուկն անվախ եւ ամեն անգամ ուրախ տանում է, բայց չգիտի, որ հարմար պահի թակարդը լարելու են: Այնպես չլինի, որ մի օր ստիպված նորից ասենք. «Օրհնվի էն սհաթը, որ ռսի ոտը մտավ Հայոց սուրբ աշխարհը»:

Ժանո ՎԱՐԴԱՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am